Azg Ազգ

22 ՄԱՐՏ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 49(4668)

ISSN: 1829-1651

Մեթյու Բրայզա. Ստեփանակերտում իջնող օդանավերը ռմբակոծելն անընդունելի է

Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպան Մեթյու Բրայզայի անցյալը որեւէ կերպ հիմքեր չի տալիս ենթադրելու, թե հավասարակշիռ խոսքերը կամ դատողությունները հենց այդ դիվանագետի մոտեցումն են, սակայն որոշ պարագաներում անգամ Բրայզայի նման գործիչները հարկադրված են բարձրաձայնել ճշմարտությունը, անգամ եթե դրանից կարող են տուժել ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունների նավթա-գազային շահերը: Թեեւ հարկ է նշել, որ մի հավասարակշիռ խոսքի կողքին Բրայզան հակակշռող «կողմնակալ» արտահայտություններ օգտագործել չի զլանում:

«Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությանը մարտի 19-ին տված հարցազրույցում պատասխանելով հարցին, թե ինչու են «կողմերը արհամարհում դիպուկահարներին շփման գծից հեռացնելու կոչերը», ամերիկացի դիվանագետը կրկին հավասարության նշան է դրել այն դեպքում, երբ հայկական կողմն արդեն հոգնեցնելու աստիճան շատ հավաստիացրել է իր պատրաստակամությունը՝ հետեւելու այդ կոչերին: «ԵԱՀԿ-ի համար շատ կարեւոր է հետաքննել մահվան վերջին երկու դեպքերը՝ ադրբեջանցի երեխայի եւ մարտի 18-ին սպանված հայ զինվորի առնչությամբ», նախ նշել է Բրայզան, ավելացնելով, որ այդ մահերը ողբերգություն են, որոնք էլ հենց ընդգծում են, թե ինչու ուժի կիրառումը պետք է դադարեցվի:

«Ինչպես համանախագահները բազմիցս կրկնել են, ղարաբաղյան հակամարտությունը ռազմական լուծում չունի», հարցազրույցում հայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը: Նրա խոսքերով, «ուժի կիրառումը կամ դրա կիրառման սպառնալիքը, ներառյալ նաեւ քաղաքացիական ինքնաթիռների դեմ, որոնք որեւէ վտանգ չեն սպառնում, անընդունելի է եւ հակասում է Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների՝ խաղաղ, բանակցային կարգավորման ձգտելու առնչությամբ ստանձնած պարտավորություններին»:

Բրայզայի ներկայացմամբ, Միացյալ Նահանգները «կողմերին կոչ է անում աշխատել համատեղ լուծելու «կոմերցիոն թռիչքների անվտանգության բոլոր հարցերը՝ մինչեւ Լեռնային Ղարաբաղի նոր օդանավակայանի նախատեսված բացումը»: Սա էլ հստակ արձագանք ու նախազգուշացում է Ադրբեջանին առ այն հայտարարությունները, թե ադրբեջանական ուժերը կռմբակոծեն Ստեփանակերտ վայրէջք կատարող ինքնաթիռները: Այս պարագայում Բրայզան խոսել է որպես ամերիկացի այն դեպքում, երբ օրերս տարածաշրջանային այցի շրջանակներում նաեւ Երեւան այցելած ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի արտգործնախարար Աուդրիանուս Աժուբալիսը նույն հարցի առնչությամբ բավարարվեց ընդհանրական հայտարարությամբ, թե դա պետք է կարգավորվի քաղաքացիական ավիացիայի մասին միջազգային նորմերով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պուտինը խոսել է ԱՄՆ-ի խղճի եւ տրամաբանության բացակայության մասին

Վոտկինսկում գտնվող Ռուսաստանի վարչապետ **Վլադիմիր Պուտինը** անդրադարձել է Լիբիայում եւ նրա շուրջը տիրող իրավիճակին: Ըստ «ՌԻԱ Նովոստի» գործակալության՝ Պուտինը նշել է. «Այլ երկրների հակամարտություններին միջամտելու քաղաքականությունը ԱՄՆ-ի համար կայուն տենդենցի է վերածվել: Նախագահ Քլինթոնը ռմբակոծեց Բելգրադը, Բուշը՝ Իրաքն ու Աֆղանստանը: Խաղաղ բնակչության պաշտպանության գաղափարը հիմա էլ Լիբիայի հերթն է: Որտե՞ղ են խիղճն ու տրամաբանությունը: Պատասխանը միանշանակ է՝ դրանք բացակայում են, թե՛ մեկը, թե՛ մյուսը»: Դե իսկ Լիբիայի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած բանաձեւը Ռուսաստանի վարչապետին հիշեցրել է... միջնադարը. «Այդ բանաձեւը վնասակար է եւ թերի: Այն կարծես լինի խաչակրաց արշավանք սկսելու միջնադարյան կոչ», նկատել է Պուտինը:

ԵՐԵՔԱՊԱՔԱԿԱՆ

Արմենական-ՌԱԿ կենտրոնական վարչության հայտարարությունը

Մարտի 17-ին Մատենադարանի մոտ եւ ապա Թատերական հրապարակում տեղի ունեցած ընդդիմության՝ ՀԱԿ-ի հանրահավաքը մեկ անգամ եւս ապացուցեց, որ, ցավոք, Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքական գլխավոր ուժերը, լինի ընդդիմություն թե իշխանություն, ավելի հակված են գործելու իրենց կուսակցական նեղ շահերից ելնելով, քան հասարակության:

Հայաստանում գործող երկու հիմնական կոալիցիաները՝ թե՛ ընդդիմադիր, հանձին ՀԱԿ-ի, թե՛ իշխող, մենաշնորհել են քաղաքական դաշտը, չհանդուրժելով քաղաքական այլ ուժերի գործունեությունը: Նման իրավիճակը ձեռնտու է երկուսին էլ, որոնք իրենց գործունեությունն արդարացնում եւ բացատրում են հակառակ կողմի գոյությամբ, այլ ոչ ՀՀ քաղաքացիների շահերով, որոնք գտնվելով տնտեսական ու սոցիալական ծանր վիճակում, իրավամբ ակնկալում են հիմնարար, համակարգային, արմատական փոփոխություններ:

Մարտի 17-ի Մատենադարանի մոտ եւ ապա Թատերական հրապարակում տեղի ունեցած ընդդիմության՝ ՀԱԿ-ի հանրահավաքը մեկ անգամ եւս ապացուցեց, որ, ցավոք, Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքական գլխավոր ուժերը, լինի ընդդիմություն թե իշխանություն, ավելի հակված են գործելու իրենց կուսակցական նեղ շահերից ելնելով, քան հասարակության:

Հայաստանում գործող երկու հիմնական կոալիցիաները՝ թե՛ ընդդիմադիր, հանձին ՀԱԿ-ի, թե՛ իշխող, մենաշնորհել են քաղաքական դաշտը, չհանդուրժելով քաղաքական այլ ուժերի գործունեությունը: Նման իրավիճակը ձեռնտու է երկուսին էլ, որոնք իրենց գործունեությունն արդարացնում եւ բացատրում են հակառակ կողմի գոյությամբ, այլ ոչ ՀՀ քաղաքացիների շահերով, որոնք գտնվելով տնտեսական ու սոցիալական ծանր վիճակում, իրավամբ ակնկալում են հիմնարար, համակարգային, արմատական փոփոխություններ:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Արա Աբրահամյանն առաջարկում է վերանայել ատոմակայանի պաշտպանության չափորոշիչները

Ռուսական «Վլաստ» պարբերականին տված հարցազրույցում Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ **Արա Աբրահամյանը** ճապոնական աղետի համայնապատկերում անդրադարձել է Հայաստանի ատոմակայանին եւ առհասարակ «խաղաղ ատոմ»-ին: Վախենո՞ւմ է արդյոք Աբրահամյանը «խաղաղ ատոմից» հարցին նա պատասխանել է. «Մեկ ամիս առաջ ես հաստատապես կասեի, որ չեմ վախենում, բայց հիմա իրավիճակը մտահոգիչ է: Ինքս դեմ չեմ ատոմային էներգիային, սակայն աշխարհը զարգացել է՝ հաշվի առնելով բնության կատակլիզմները»: Կոնկրետ Մեծամորի ատոմակայանի մասով Աբրահամյանը նկատել է, որ Հայաստանն այն կառուցել է սովետական

ստանդարտներով՝ առանց «տանիքի», ինչպես Չեռնոբիլինն էր. «Պետք է վերանայել ատոմակայանի պաշտպանության չափորոշիչները: Կարծում եմ՝ հայկական ատոմակայանի պաշտպանության մակարդակը ավելի ցածր է ճապոնական ԱԷԿ-ից, չեմ կարծում, որ Մեծամորը դիմանա 8 բալին: Հետեւաբար՝ անհրաժեշտության պարագայում Հայաստանը պետք է փակի ատոմակայանը», ասել է Աբրահամյանը: Նշենք, որ, համաձայն որոշ փորձագետների կարծիքի, Երեւանից 30 կմ հեռավորության վրա գտնվող եւ Սպիտակի երկրաշարժից հետո՝ 1995-ին վերաշահագործված Մեծամորի ատոմակայանը կարող է գործել մինչեւ 2016-ը: Թերեւս հենց այդ հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ իշխանությունները պատրաստվում են նոր ատոմակայան կառուցել:

Հ. Ա.

ԼՂ օդանավերը պայթեցնելու ահազանգը՝ ԵՄ-ին զգոնության կոչ

Մարտի 18-ի European Circle օնլայն հանդեսում «Որտե՞ղ է Եվրոպան» խորագրի տակ «Թռիչքներ արգելող գոտի Կովկասո՞ւմ» վերնագրով կարծիք է արտահայտել Բեռլինի Եվրոպական ակադեմիայի նախագահ պրոֆ. **Էկարտ Դ. Շտրատենշուլթեն**: «Հասկանալի է, ողջ աշխարհը հայացքը հառել է Ճապոնիային եւ Լիբիային: Այուս հաղորդագրությունները հազիվ թե միջազգային ուշադրության են արժանանում», գրում է քաղաքագետն ու որպես օրինակ մատնանշում «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգի» 2011-ի մարտի 17-ի հրապարակումը՝ Ադրբեջանի կառավարությունը սպառնում է գնդակոծել այն օդանավերը, որ Ստեփանակերտի վերակառուցված օդանավակայանից են երկինք բարձրանալու: «Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքն է, որի կարգավիճակն ու ապագան վիճարկվում են Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ: Հիմա միջազգային հանրությունը կարող է կովկասյան այդ բառային ահազանգին վերջ տալ: Անշուշտ, ավելի լավ կլիներ, որ նրանք նախապես թեմայով զբաղվեին, քան ավելի ուշ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դա պիտի անի: Այստեղ Եվրոպական միության դերն առանձնահատուկ պահանջված է, քանի որ հակամարտության կողմերը կապված են Արեւելյան գործընկերության եւ Սեւծովյան համագործակցության միջոցով: Լավ կլինի, որ նախքան պայթյունը տիկին Էշթոնն արթնանա», գրում է Բեռլինի Եվրոպական ակադեմիայի ղեկավարը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Հեռուստառադիո ընկերության խորհրդի նոր անդամներ

Նախագահ Սարգսյանը երեկ հրամանագիր է ստորագրել Մերուժան Տեր-Գուլանյանին եւ Նարա Շլեմչյանին հանրային հեռուստառադիո ընկերության խորհրդի անդամներ նշանակելու մասին՝ 6 տարի ժամանակով, հիմք ընդունելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը եւ հաշվի առնելով Հայաստանի նախագահի՝ 2011 թվականի փետրվարի 21-ի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի որոշումը: Մրցութային հանձնաժողովը 11 դիմողներից հաղթող է ճանաչել վերը նշված անձանց՝ հիմք ընդունելով լրագրության եւ հատկապես հեռուստատեսության ոլորտում այս երկու թեկնածուների երկարամյա փորձը:

Մեռած մարդիկ տարիներով կենսաթոշակ են ստացել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերահսկիչ պալատի խորհրդի հերթական նիստից հետո ՎՊ նախագահ **Իշխան Զաքարյանը** երեկ ներկայացրեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ ՎՊ անցկացրած ստուգումների արդյունքները: Առաջ անցնելով ասենք, որ ստուգումներով հայտնաբերված տխուր պատկերը ժամանակին ՎՊ նախագահ Իշխան Զաքարյանը զեկուցել է նախագահ Սարգսյանին, նախագահի հանձնարարությամբ Տիգրան Սարգսյանն ազատել է սոցիալական ծառայության պետ Վազգեն Խաչիկյանին (չնայած այն ժամանակ հայտարարվեց, որ Վ. Խաչիկյանն ազատվել էր իր դիմումի համաձայն, բայց այսպես ասաց Ի. Զաքարյանը): Նախագահ Սարգսյանի մոտ հրավիրվել է խորհրդակցություն, հանձնարարվել է մինչեւ այս տարվա հունիս ամիսը ծառայության 51 տարածքային կառույցներում իրականացնել լայնածավալ ստուգումներ՝ առաջին հերթին մարելով ցուցակները եւ վերացնելով խախտումները, որոնց ընդամենը փոքր մասը ներկայացրել է ՎՊ նախագահը: Այդ գործը հանձնարարվել է ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչությանը: Վերջինս 2010 թվականի դեկտեմբերից սկսել է ստուգումները:

Վերադառնալով Ի. Զաքարյանի ներկայացրած մտահոգիչ պատկերին, ըստ որի սոցիալական ապահովության պետական ծառայությունը չի ճշտել պետական մարմիններում եղած կենսաթոշակառուների վերաբերյալ իրական տվյալները, չի համադրել ցուցակները եւ սխալները չի ուղղել, այդպիսով նախադրյալներ է ստեղծել խախտումների համար: Այսպես՝ ստուգելով ծառայության 51 տարածքներից 14-ը՝ ՎՊ-ն աղաղակող խախտումներ է գտել. կենսաթոշակներ են վճարվել մահացած, երկրից երկար տարիներ բացակայած մարդկանց՝ փոշիացնելով պետական բյուջեի կենսաթոշակային գումարները:

Ներկայացվող թվերը վերաբերում են 2008-2009 թվականներին եւ 2010 թվականի 8 ամիսներին՝ մինչեւ հոկտեմբերի 1-ը, ՎՊ ստուգման պահը: Բյուջեի 30 տոկոսը տանող կենսաթոշակային եւ նպաստային վճարումների այս ոլորտին պետբյուջեից տարեկան հատկացվում է 229 միլիարդ դրամ գումար, այնպես որ սա ահռելի մի ոլորտ է: Փաստորեն՝ սոցիալական ապահովության պետական ծառայության 51 տարածքային բաժիններից միայն 14-ում ստուգումներ անելով եւ ՎՊ-ն ընտրանքային կարգով ստուգելով ընդամենը 8-10-12, մախիմում՝ 15 տոկոս գործեր՝ հայտնաբերել է փոշիացած միլիոնավոր դրամների գումարներ: 2008, 2009, 2010 թվականներին 8 ամիսների կտրվածքով ՀՀ-ում մահացած կենսաթոշակառուների թիվը 58 921 է եղել: Այդ գործերից ՎՊ-ն ստուգելով 843 գործ, հայտնաբերել է տարաբնույթ 581 խախտում:

Տես էջ 2

Միակողմանակի հեռաֆոնություն՝ Ադրբեջանի պատճառով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների առաջարկով Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում, ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայության տեղեկացմամբ, մարտի 20-ին պլանավորված ԵԱՀԿ դիտարկում-հեռաֆոնությունը Ասկերանի ուղղությամբ՝ Ակնա բնակավայրի մոտակայքում, կազմված մարտի 17-ին տվյալ վայրում ադրբեջանական կողմից դիտուկահար կրակոցից ԼՂՀ պաշտպանության բանակի զինծառայող Ահարոն Հայրապետյանի մահվան հետ, չի կայացել Ադրբեջանի հրաժարվելու պատճառով:

ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ դեսպան Անջեյ Կասպրշիկի ղեկավարությամբ ԵԱՀԿ առաքելությունը ստիպված էր հեռաֆոնությունն իրականացնել միակողմանիորեն: ԼՂՀ պաշտպանության բանակի ներկայացուցիչները դիտորդական խմբին տեղեկացրել են կրակի դադարեցման ռեժիմի կոպիտ խախտման դեպքի մանրամասների մասին, երբ ԼՂՀ պաշտպանության բանակի զինծառայող է զոհվել:

Մի քանի րոպե անց՝ ԵԱՀԿ առաքելության մեկնելուց հետո, այն վայրի ուղղությամբ, որտեղ հեռաֆոնություն էր իրականացվում, դիտուկահար կրակոցներ են արձակվել ադրբեջանական կողմից: Դեսպան Անջեյ Կասպրշիկին իրազեկ են դարձրել տվյալ միջադեպի մասին:

Սրանից առաջ՝ մարտի 19-ին ԼՂՀ պաշտպանության նախարարությունը եւս հանդես էր եկել հայտարարությամբ: Ըստ այդմ, «Ջնայած մարտի 5-ին Սոչիի եռակողմ հանդիպման արդյունքում հակամարտ կողմերի միջեւ փոխադարձ վստահության հետագա ամրապնդման շուրջը ձեռքբերված պայմանավորվածությանը, այնուամենայնիվ, ադրբեջանական կողմը շարունակում է իր սադրիչ գործողություններով նպաստել տարածաշրջանային ռազմաքաղաքական լարվածության խորացմանը»:

Ասվածի անհերքելի ապացույցն են, ըստ նույն հայտարարության, նախորդ շաբաթ «ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդի կողմից ձեռնարկված նախահարձակ գործողությունները, որոնց ընթացքում ադրբեջանական բանակի առաջապահ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի զենքերով շուրջ 200 անգամ խախտել են հրադադարի պահպանման ռեժիմը՝ արձակելով ավելի քան 1300 կրակոց: Առավել ինտենսիվ խախտումներ են արձանագրվել մարտի 17-ին եւ 18-ին, որոնց հետեւանքով հայկական կողմն ունեցել է կորուստ»: «**Ազգը**» տեղեկացրել է, որ մարտի 17-ին ժամը 17:30-ի սահմանում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան (Ասկերանի) պաշտպանական ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հակառակորդի արձակած գնդակից մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող, 1991թ. ծնված Ահարոն Արմենի Հայրապետյանը:

«Այն, որ ադրբեջանական բանակի ձեռնարկած հերթական նախահարձակ գործողությունն իրականացվել է մարտի 5-ին Սոչիի եռակողմ պայմանավորվածության շրջանակում տեղի ունեցած գերիների փոխանակումից ընդամենը մեկ ժամ հետո եւ գրեթե նույն պաշտպանական հատվածի դիրքերից մեկում, խոսում է այն մասին, որ ադրբեջանական կողմը ոչ միայն չի հարգում հրադադարի պահպանման ռեժիմը, այլեւ միտումնավոր փորձում է շրջանցել հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված որեւէ առաքելություն», նշված է ԼՂՀ ՊԲ հայտարարության մեջ:

Panorama.am-ի հետ զրույցում ԼՂՀ-ի նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչության պետ **Դավիթ Բաբայանը** երեկ տեղեկացրել է, որ Արցախը, բնականաբար, մասնակցելու է շփման գծում միջադեպերի հետաֆոնություններին ընդգծելով, որ ղարաբաղյան կողմը պատրաստ է դրան: «Հավանաբար, մոնիտորինգ իրականացնող խմբի լիազորությունները փորձ-ինչ կընդլայնվեն, եւ նրանք համապատասխան հեռաֆոնություն իրականացնելուց հետո պատժամիջոցներ կկիրառեն պայմանավորվածությունները խախտող կողմի նկատմամբ», ասել է Բաբայանը:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՈՒԼԻՍ

Լուռ հավաք՝ «Ազատության ծոմի» առաջին յոթնօրյակին

Այսօր ժամը 12-ին Ազատության հրապարակում տեղի կունենա «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանի զորակցմանը նվիրված լուռ հավաք՝ նվիրված «Ազատության ծոմի» առաջին յոթնօրյակին: Հավաքին կհաջորդի «Ժառանգության» առաջնորդի մամլո ասուլիսը: Ժամը 17:00-ին «Ժառանգության» խմբակցության պատգամավորները հանդես կգան հայտարարությամբ, այնուհետեւ ներկաներին շնորհակալական խոսքով կդիմի Ռաֆֆի Հովհաննիսյանը:

«Ժառանգության» առաջնորդին զորակցման հայտարարությամբ են երեկ հանդես եկել «ԳԱԼԱ» հեռուստաընկերության աշխատակազմը: Վերջիններս, ողջունելով Հովհաննիսյանի քայլը, կոչ են անում նրան հրաժարվել հացադուլից, քանի որ պայքարի ծայրահեղ միջոցը կարող է վնասել առողջությանը:

Հացադուլից հրաժարվելու կոչ է երեկ արել «Շրջադարձ» կուսակցությունը: ԺԿ նախագահ Տիգրան Կարապետյանն ու իր համակիրներն էլ Մատենադարանում տեղի ունեցած հանրահավաքից հետո երթով եկել են Ազատության հրապարակ՝ իրենց բարոյական աջակցությունը Ռաֆֆի Հովհաննիսյանին առաջարկելու:

Բացի շարքային քաղաքացիներից, անցնող օրերին «Ժառանգության» առաջնորդին այցելել են շուրջ 200 անձնավորություններ՝ պատգամավորներ, հասարակական-քաղաքական դեմքեր, արվեստագետներ, մտավորականներ:

Այսօր Ազգային ժողովի 4 խմբակցությունների ղեկավարների մասնակցությամբ, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ տեղի կունենա խորհրդակցություն՝ Ռաֆֆի Հովհաննիսյանի հացադուլի վերաբերյալ: Խորհրդակցությունը տեղի կունենա ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի առաջարկությամբ. «Անհրաժեշտ է, որ ԱԺն ցուցաբերի իր մարդկային եւ մարդասիրական վերաբերմունքը Ռաֆֆի Հովհաննիսյանի հանդեպ»: Խմբակցությունների ղեկավարները կքննարկեն Ռաֆֆի Հովհաննիսյանին ուղղելիք կոչը՝ հացադուլը դադարեցնելու մասին: Կքննարկվի նաեւ խմբակցությունների ղեկավարների՝ Ազատության հրապարակ այցելության հարցը:

Հ. Հ.

Մարտի 20-ից սկսվել է աստղագիտական գարունը

Մարտի 20-ին՝ Գրինվիչի ժամանակով 23:21-ին Արեգակը երկնքի հարավային կիսագնդից անցել է հյուսիսային կիսագունդ, ինչը համարվում է աստղագիտական գարնան սկիզբը: Արեգակի սկավառակի անցումը հասարակածով տեւել է շուրջ 33 ժամ: Մարտի 20-ը գարնանային գիշերահավասարի օրն է, երբ գիշերվա ու ցերեկվա տեւողությունները հավասարվում են: Նախկինում գարնանային գիշերահավասարը մարտի 22-ին էր, այնուհետեւ՝ 21-ին, իսկ այժմ՝ ամսի 20-ին: Նման փոփոխության պատճառը Երկրի պրոցեսիան է. նրա պտտման առանցքը ժամանակի ընթացքում տեղաշարժվում է եւ մեկ լրիվ պտույտ կատարում 26000 տարում: Գարնանային գիշերահավասարի օրը որոշ երկրներում, մասնավորապես Իրանում, համարվում է նոր տարվա սկիզբը (հենց այս օրերին իրանցիները նշում են իրենց սիրելի տոնը՝ Նովրուզը): Իսկ մեզանում եկեղեցական շարժական տոներից Զատիկի օրվա հաշվարկը եւս կազմված է գարնանային գիշերահավասարի օրվա հետ: Ամեն տարի Զատիկի օրը գարնանային գիշերահավասարից հետո առաջին լիալուսնին հաջորդող առաջին կիրակին է: Այս տարի Զատիկի օրը՝ ապրիլի 24-ը, համընկնում է թե՛ արեւմտյան, թե՛ Հայ առաքելական եկեղեցիներով:

Ի. Պ.

ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդը թափանցիկ տեղեկություն է պահանջում

Անցնող օրերին լրատվամիջոցներով ննարկվեց այն տեղեկությունը, որ ապահովագրական միջազգային մի քանի ընկերությունների դեմ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների հարուցած դատական գործով զբաղվող երկու փաստաբաններ մեղադրեցին երրորդ փաստաբանին՝ «անպարկեշտ միջոցներով ստացված գումարները յուրացնելու» մեղադրանքով: Այդ գումարները դատարանի որոշմամբ պետք է տրամադրվեին հայկական ազգային-համայնքային կազմակերպություններին: Այս կապակցությամբ ՀՅԴ կենտրոնական խորհուրդը երեկ տարածած հայտարարությամբ նշում է, որ անկախ այն հանգամանքից, թե որքանով է հիմնավոր այս մեղադրանքը, «մեծապես կարող է խախտել մեր ժողովրդի վստահությունը համազգային խնդիրների նկատմամբ»: Խորհուրդը, ընդգծելով, որ մեղադրանքները կատարում են անհատներ, «որոնք հարցի էությանը լավատեղյակ են», հետեւաբար նրանց մեղադրանքներն անտեսել չի կարելի, նշում է. «Մենք հրապարակավ դիմում ենք ինչպես մեղադրող, այնպես էլ մեղադրվող կողմերին, պահանջելով, որ իրենք անհապաղ, ինքնակամ, հստակ մասնագիտական հաշվետվություն ներկայացնեն դատական որոշմամբ հայկական կազմակերպություններին տրված դրամական բաշխումների վերաբերյալ: Կարծում ենք, որ այս գործընթացը պետք է թափանցիկ լիներ ի սկզբանե, սակայն այժմ այդպիսին դարձնելը անհետաձգելի է եւ հույժ կարեւոր», ասված է ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի հայտարարության մեջ:

Հ. Ա.

Մեռած մարդիկ տարիներով կենսաթոշակ են ստացել

1-ին էջից

Օրինակ՝ մահացած կենսաթոշակառուներին վճարվել է դեպոզիտային գումար. 2005 թվականի օգոստոսին մահացած Ռոզա Մելքոնյանը 2009 թվականի հուլիսին դիմում է գրել եւ ստացել 1 մլն 24 հազար 404 դրամի դեպոզիտային գումար: 2005 թվականի սեպտեմբերի 2-ին մահացած կենսաթոշակառու Հակոբյանը մահվանից հետո ամեն ամիս... կենսաթոշակ է ստացել մինչեւ ստուգման պահը՝ մահվանից հետո նրան վճարվել է 1 մլն 100 հազար դրամ: 2008, 2009, 2010 (8 ամիս) թվականներին դեպոզիտ ստացող կենսաթոշակառուների թիվը ՀՀ-ում կազմել է 14 287: Եթե թոշակառուն այստեղ չէ՝ թոշակները հավաքվում-դեպոզիտացվում են, եւ կենսաթոշակառուն, վերադառնալու դեպքում միայն վերջին երեք տարվանը կարող է ստանալ իր դիմումի համաձայն եւ անձամբ: 14287 դեպոզիտացված թոշակառուների որ մասն է իրական. ընտրանային 1656 գործի ստուգման արդյունքում՝ 1157 խախտում է հայտնաբերվել: Եղել են դեպքեր, երբ դեպոզիտը վճարվել է արդեն վճարված ժամանակաշրջանի համար, այսինքն կատարվել է կրկնակի վճարում, օրինակ՝ կենսաթոշակառու Աշոտ Մխոյանին 2008 թվականի հոկտեմբերին միանվագ վճարվել է 6 ամսվա կենսաթոշակ: Վճարումը կատարելուց 6 ամիս անց նույն վճարման ժամանակի համար կրկին վճարում է կատարվել: Կան դեպքեր էլ, որ դեպոզիտի վճարում կատարելը տեղեկատվական բազաներում չի արտացոլվել, կենսաթոշակառուն նորից է ներկայացվել վճարման, վճարումները միլիոնանոց գումարներ են, առանձին դեպքերում տարածքային բաժիններից ընդհանրապես բացակայել են կենսաթոշակառուների գործերը: Եվգենյա Թումանյանին 2008 թվականի ապրիլին վճարել են 807 հազար դեպոզիտային գումար, սակայն պարզվել է, որ նա մահացել է 1990-ական թվականների սկզբին, իսկ նրա անձնական գործն ընդհանրապես չկա: Աշխատանքային աստիճի սխալ հաշվառման դեպքեր կան՝ ավել տարիների վճարմամբ: Հայրենական պատերազմի վետերաններին՝ «Պատվովճարներ» ծրագրի ստուգման արդյունքում 12100 պատվովճար ստացող վետերանների գործերից ստուգվել է 85-ը, հայտնաբերվել է 11 խախտում: Օրինակ՝ պատվովճար է նշանակվել 1959 թվականին ծնված մարդու, մահացած վետերանների, այլ երկրների քաղաքացի դարձած մարդկանց:

Ի վերջո՝ որքա՞ն գումարներ են փոշիացել, դա պարզ կլինի, երբ մարվեն ցուցակները, իսկ որքան գումար կտնտեսվի՝ ցույց կտա ժամանակը: Կենսաթոշակային վճարումներ իրականացնող «Հայփոստ» հետ հանդիպած ՎՊ նախագահը փոխանցել է նախագահ Սարգսյանի հրահանգը՝ «Կա կենսաթոշակառու՝ կա վճարում սխեման»: Ստուգման ժամանակից հետո ընկած շրջանում «Հայփոստը» զգալի գումարներ վերադարձել է բյուջե, այժմ խստագույնս պահպանվում է «Կա մարդ՝ կա վճարում» սկզբունքը: Այս փետրվարին, ըստ «Հայփոստի», հունվարին չի վճարվել 20 հազարից ավելի, փետրվարին՝ 19816 թոշակառու, քանի որ չեն ներկայացել: Ովքե՞ր են այս մարդիկ՝ մինչեւ հունիսի 1-ը կպարզվի: Այս առումով եւ ՎՊ-ն է վճռական, եւ այն կազմակերպությունները, որոնց հանձնարարվել է զբաղվել այս խնդրով, եւ այն կառույցները, ովքեր զբաղվում են վճարմամբ:

«**Ազգի**» հարցին, թե արդյո՞ք միտում չկա ցուցակների անճշտության մեջ (եւ ոչ թե մասնագիտական թերացում), եւ արդյոք Վ. Խաչիկյանն առանց վերադասի կարո՞ղ էր այդպիսի խախտումներ անել: Ըստ ՎՊ նախագահի՝ կարող է լինել եւ դիտավորություն, եւ անփութություն եւ չիմացություն կամ ոչ ճիշտ ծրագրում, մի երկու ամիս էլ համբերենք՝ կիմանանք: Իսկ թե միայն Վ. Խաչիկյանի գրպա՞նն են մտել գումարները, կամ ՎՊ-ն դիմելո՞ւ է դատախազություն՝ Ի. Զաքարյանը նկատեց, թե իր խնդիրը չէ հայտարարել՝ ո՞ւմ գրպանն են գնացել կամ ո՞ւր են գնացել փոշիացած գումարները, ՎՊ-ն բնութագրական խախտումներն է բացահայտել՝ ի պատիվ ՎՊ աշխատակիցների՝ ամբողջապես: Իսկ դատախազություն դիմելու առումով քրեական խախտումներ անշուշտ նկատվել են, սակայն մինչեւ հունիս ժամանակ կա ճշտելու, թե ի վերջո ինչ է եղել այս բնագավառում. «Ամփոփենք-վերջացնենք, հասկանանք իրական չափերը, հետո պատասխանատվությունից որեւէ մեկը չի խուսափի», ասաց Ի. Զաքարյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ եղիշակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Նոր լիազորություններ՝ արդյունավետ գործելու համար

«Գերիշխող դիրք. խնդիրները եւ հեռեւանքները»: Այս անվանմամբ երեկ Երեւանում մեկնարկեց միջազգային համաժողով, որին մասնակցում էին վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման հարցերով համաժողովի գլխավոր քարտուղար **Սուրաքայ Պանիտչպակդին** եւ ուրիշներ:

Խոսելով տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործունեության մասին, **Արտակ Շաբոյանը** մասնավորապես նշեց. «Անցած տասը տարիների ընթացքում հանձնաժողովն ունեցել է ինչպես դժվարություններ ու ձախողումներ, այնպես էլ ձեռքբերումներ ու հաջողություններ: Այդ են վկայում հատկապես միջազգային կառույցների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման հարցերով համաժողովի բարձր գնահատականը, որ տվել է Հայաստանի մրցակցային մարմնին՝ փորձագիտական առաջարկներին արագ եւ արդյունավետ արձագանքելու համար: Նույն գնահատականների համաձայն, հանձնաժողովի ձեռնարկած օրենսդրական փոփոխությունների եւ հաստատված ռազմավարական ծրագրի իրականացման պարագայում հնարավոր կլինի հասնել շոշափելի արդյունքների»:

ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման հարցերով համաժողովի գլխավոր քարտուղար Սուրաքայ Պանիտչպակդին, արձանագրելով Հայաստանի տնտեսության՝ ԱՀԿ-ին անդամակցությունից հետո մինչ այժմ ունեցած առաջընթացին, միաժամանակ նշեց, որ անելիքները դեռ շատ են: Նա ընդգծեց սպեցիֆիկ տնտեսության դեմ պայքարի անհրաժեշտությունը, անհրաժեշտ համարելով պետական բոլոր մարմինների ջանքերի համատեղումն այս հարցում:

Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը անդրադարձավ Հայաստանի մրցակցային միջավայրին խոչընդոտող մի շարք օբյեկտիվ հանգամանքների: Դրանք են հարկային եւ մաքսային վարչարարությունը եւ հավասար պայմանների ապահովումը բոլոր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, ձեռնարկությունների թափանցիկ աշխատանքը եւ խոշոր տնտեսվարող սուբյեկտների կողմից աուդիտորական եզրակացության հիման վրա հաշվետվությունների հրապարակումը, կոռուպցիոն ռիսկերը, հանրության հասկ դիրքորոշումը կոռուպցիոն երեւույթների եւ սպեցիֆիկ տնտեսության նկատմամբ, Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակն ու մասնավորապես, Հայաստանն աշխարհի հետ կապող սակավաթիվ միջանցքների առկայությունը:

Այնուհետեւ Տիգրան Սարգսյանը ներկայացրեց կառավարությունը ձեռնարկած քայլերը վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես, տնտեսական մրցակցության եւ հանձնաժողովի գործունեության արդյունավետության մասին նա ասաց. «Գաղտնիք չէ, որ եթե հասարակությունը վստահում է հանձնաժողովին, արդ հանձնաժողովի դերակատարությունը մրցակցային դաշտում էապես բարձրանում է: Այդ տեսակետից ակնկալում ենք, որ այս տարի, հանձնաժողովը, լրացուցիչ լիազորություններ ստանալով օրենսդիր իշխանության կողմից, անհապաղ պետք է բացահայտի մեր հանրությանը մտահոգող մի շարք ոլորտներում տիրող իրավիճակը եւ իրեն օրենքով տրված լիազորություններով համարձակորեն կիրառի պատժամիջոցներ»:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արտակ Շաբոյանը չի կարծում, որ ձվի գնի բարձրացում կլինի

Լրագրողների հարցերին պատասխանելով, երեկ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանը** հայտնեց, որ որոշ շուկաներում ուսումնասիրություններն ավարտվել են, իսկ մյուսներում դեռ ընթանում են: Կոնկրետ ձվի շուկայի վերաբերյալ հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքներով պարզվել են չարաշահումները: Դրանք կներկայացվեն մինչեւ Զատիկ, իսկ մեղավորները կպատժվեն: Դա, ըստ հանձնաժողովի նախագահի, կանխարգելիչ նշանակություն կունենա մյուս տնտեսվարող սուբյեկտների համար, որպեսզի նրանք ձեռնպահ մնան նման քայլերից:

Տեղեկացվեց, որ ներկայումս ուսումնասիրվում են կաթնամթերքի, սուրճի շուկաները, բեռնափոխադրող ընկերությունների ծառայությունների գները:

«Այս ոլորտի վերաբերյալ ուսումնասիրություններում ունենք կոնկրետ եզրահանգումներ, որոնք կներկայացվեն ավարտելուց հետո», նշեց Արտակ Շաբոյանը:

Պանրի շուկայում կատարած ուսումնասիրության մասին խոսելով, Արտակ Շաբոյանն ասաց, որ բացահայտվել էր գների բարձրացման պատճառ ընկերությունը՝ «Աշտարակ կաթը»: Սակայն ընկերությանը հնարավոր չեղավ պատասխանատվության ենթարկել, քանի որ մեր օրենսդրությունը հնարավորություն չտվեց նրան գերիշխող ճանաչել եւ որակել այդ բարձրացումը որպես չարաշահում:

Ա. Մ.

Պանիտչպակդին գլխավորում էր ԱՀԿ-ն, երբ դրան անդամակցեց Հայաստանը

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի (UNCTAD) գլխավոր քարտուղար Սուրաքայ Պանիտչպակդիին: Սարգսյանն, ըստ պաշտոնական հաղորդագրության, կարեւորել է ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի օժանդակությունը զարգացող երկրների տնտեսություններին, ինչպես նաեւ այդ տնտեսություններն առավել մրցունակ ու կայուն դարձնելու ուղղությամբ կազմակերպության կողմից գործադրվող ջանքերը:

Պանիտչպակդին նշել է, որ իր այցը Երեւան հաճելի է, երկու պատճառով. առաջին՝ Հայաստանն ԱՀԿ-ին անդամակցել է, երբ կազմակերպությունն ինքն էր գլխավորում, եւ այդ օրվանից ի վեր ստանձնած պարտավորությունների ուղղությամբ մեր երկիրը զգալի աշխատանք է իրականացրել: Երկրորդ կարեւոր պատճառը, ըստ Պանիտչպակդիի, Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ստեղծման 10-րդ տարեդարձի տոնակատարությանն ու Երեւանում միջազգային համաժողովին մասնակցելն է, որն ուղղված է Հայաստանի օրինակով մրցակցության օրենքի եւ քաղաքականության վերաբերյալ կամավոր փորձագիտական գնահատման զեկույցի արդյունքների ներկայացմանը:

Պանիտչպակդին երեկ հանդիպել է նաեւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին: ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Հայաստանի հետ հաստատված համագործակցությունը եւ նշել, որ Հայաստանում հաջողությամբ են ընթանում տնտեսական բնագավառի բարեփոխումները:

Սուրաքայ Պանիտչպակդին Հայաստանի արտգործնախարարին ներկայացրել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման իր տեսլականը:

Ա. Հ.

Ինտերնետի տարածվածության մակարդակը Հայաստանում էականորեն բարելավվել է

2010 թվականին Հայաստանում էականորեն բարելավվել է տեղեկատվական անվտանգության մակարդակը: Սա արձանագրվել է մարտի 21-ին կայացած տեղեկատվական անվտանգության հայեցակարգի իրականացումը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստում, որը վարել է հանձնաժողովի նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը**:

Այս ոլորտում լիազոր մարմին ճանաչված ազգային անվտանգության ծառայությունը չեզոքացրել է 2010 թվականին պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի վրա կատարված հարձակումները, որոնք շատ տարածված էին 2008-2009 թվականներին: Նիստում որոշվել է առաջարկել լիազոր մարմնին՝ ընդլայնել ԱԱԾ վերահսկման տակ գտնվող պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի ցանկը՝ ներառելով նաեւ ՀՀ եւ ԼՂՀ մի քանի այլ պաշտոնական կայքեր:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ 2010 թվականին էականորեն բարելավվել է նաեւ բազմաշերտ ինտերնետի տարածվածության մակարդակը ոչ միայն Երեւանում, այլեւ՝ մարզերում. «Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին երկու տարվա ընթացքում բազմաշերտ ինտերնետի մեծածախ գինը նվազել է շուրջ 6 անգամ՝ 900 դոլարից հասնելով 150-ի, եւ կարծում եմ՝ դեռ կան թե՛ գների նվազեցման, թե՛ շուկայի ազատականացման ուղղությամբ հետագա քայլերի իրականացման ռեսուրսներ, ինչը հնարավորություն կտա հանրապետության ողջ տարածքում ապահովել որակյալ ինտերնետ ծառայություններ: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էականորեն բարելավվել է նաեւ ցանցային պատրաստվածության աստիճանը, այսօր շուկայում գործում են մի շարք կազմակերպություններ, որոնք բավական որակյալ ծառայություններ են մատուցում, ինչը վկայում է, որ ոլորտում մրցակցության զարգացումը հնարավորություն է տալիս ե՛ւ որակը բարձրացնել, ե՛ւ գները նվազեցնել»:

Արթուր Բաղդասարյանը կարեւորել է նաեւ այս ուղղությամբ համագործակցության խորացումը ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի, ՀԱՊԿ-ի հետ: Նշված կազմակերպությունների շրջանակում իրականացվում են համատեղ օրերացիաներ՝ կանխելու կիբեռհարձակումները, օրինակ՝ Հայաստանն ակտիվ մասնակցում է ՀԱՊԿ շրջանակում իրականացվող «Պրոֆսի» միջոցառման:

Հանձնաժողովի որոշմամբ անցած տարեվերջին Հայաստանում ներդրվել է այս ոլորտին առնչվող խնդիրների մոնիտորինգի համակարգ: Նիստում ներկայացվել են Հայաստանում տեղեկատվության անվտանգության ապահովման, բազմաշերտ ինտերնետի տարածվածության, ցանցային պատրաստվածության մոնիտորինգի արդյունքները: Մասնավորապես նշվել է, որ 2007-2010 թվականներին հեռահաղորդակցության ոլորտի դերակատարները մեծ ներդրումներ են կատարել Հայաստանի հեռահաղորդակցության ենթակառուցվածքում: Երեւանում հաստատվել է ակտիվ մրցակցություն, որը հանգեցրել է գների կտրուկ նվազման, սակայն մարզերում դեռեւս թույլ են բնակչության ինտերնետ սպասարկման ցանցերը:

Հանձնաժողովը քննության է առել ոլորտի զարգացման խոչընդոտները եւ որոշել մշակել դրանց վերացմանն ուղղված գործողությունների ծրագիր:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ՕԴԱՆԱՎԵՐԻՆ

Ադրբեջանը մի ձեռքով խաղաղություն է պահանջում, մյուսով՝ դաժանություն իրականացնում

Արձագանքելով Ստեփանակերտում օդանավակայան կառուցելուն՝ Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի պետական վարչության տնօրեն **Արիֆ Մամեդովը** օրեր առաջ հայտարարել էր, որ Ստեփանակերտի օդանավակայանի գործարկումից հետո Ադրբեջանի իշխանությունները կոմբինատներն ինֆրաթիռները: Անդրադառնալով այդ հայտարարությանը, «**Ազգը**» տեղեկացրել էր, որ Մամեդովը պատրաստվում է նամակ ուղարկելել Քաղաքացիական ավիացիայի միջազգային վարչություն՝ ICAO, խնդրելով այն փոխանցել հայկական կողմին:

Երեկ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչությունը ստացել է Մամեդովի նամակը: Նամակում մասնավորապես ասված է. Ադրբեջանը պատրաստ է հարվածել Լեռնային Ղարաբաղ ուղեւորվող օդանավերին, եթե Ղարաբաղի իշխանությունները վերաբացեն Ստեփանակերտի օդանավակայանը:

«Զարմանալի է, որ նման խնդիր է բարձրացնում քաղաքացիական ավիացիան ունի մի շարք «ոչ»-եր: Դրանցից մեկն էլ «ոչ»-ն է քաղաքականությանը: Քաղաքացիական չպետք է զբաղվի քաղաքականությամբ, պետք է «ոչ» ասի պատերազմին, սակայն չի կարող «ոչ» ասել թռիչքներին», ասաց ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչության պետ **Արտյոմ Մովսիսյանը**:

Նրա մեկնաբանությամբ՝ Ադրբեջանը պետք է հիմնավորի իր ռազմատենչ հայտարարությունը: «ԼՂՀ-ն թռիչքներ չէր իրականացնում ոչ այն պատճառով, որ վախենում է թռչելուց: ԼՂՀ-ն շատ կարգապահ պետություն է, եւ եթե թռիչքային եւ ավիացիոն անվտանգությունները չեն համապատասխանում որոշակի չափանիշների, ապա թռիչք չի իրականացվում: 3 տարվա ընթացքում ԼՂՀ իշխանությունները վերոնշյալ բոլոր խնդիրները լուծել են ու պատրաստ են թռիչքներ իրականացնել»: Մովսիսյանը փաստեց, որ ադրբեջանական իշխանությունները մեջլիսի ամբիոնից կոչեր են անում՝ դատապարտելով դաժանությունը, բարձրացնում են ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում մանկահասակ երեխայի մահվան հարցը, սակայն մեկ այլ ամբիոնից դաժանության կոչ են անում:

«Այդ նույն օդանավի մեջ են լինելու երեխա, ծերունի, քաղաքացիներ: Ստացվում է, որ մի «ձեռքը» ոչ է ասում դաժանություն իրականացնելուն, մյուսը պատրաստ է դաժանություն անել», ասաց ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչության պետը:

Հայկական կողմը Ստեփանակերտի օդանավակայանի ու Ադրբեջանի իշխանությունների հայտարարությունների վերաբերյալ հարց է բարձրացնելու ICAO-ում՝ ակնկալելով համապատասխան վերաբերմունք Ադրբեջանի հայտարարության նկատմամբ ու պահանջելով սանկցիաներ կիրառել:

Հայաստանն ու Ադրբեջանը ICAO անդամներ են եւ ունեն բազմաթիվ պարտավորություններ. դրանցից մեկն էլ այն է, որ որեւէ երկիր իրավունք չունի ռմբակոծելու հարեւան երկրի քաղաքացիական օդանավերը: Հիշեցնենք, որ Ստեփանակերտի օդանավակայանը կգործի մայիսի 9-ից:

Հ. Հ.

«Արմավիան» ու «Զվարթնոցը» հաշտվեցին

Վերոնշյալ երկու ընկերությունները երեկ ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որը փաստում է, որ վերջին երկու շաբաթվա ընթացքում հրապարակային բնույթ ստացած վեճերը հարթվել են:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ «Զվարթնոց» օդանավակայանը հրաժարվել էր սպասարկել «Արմավիայի» չվերթը՝ հայտարարելով, որ ընկերությունը պարտքեր ունի: «Արմավիան» էլ մեղադրել էր օդանավակայանին՝ բարձր սակագներ սահմանելու եւ ազգային ավիափոխադրողին արտոնություններ չտրամադրելու մեջ: «Արմավիայի» նոր չվերթերի համար «Զվարթնոցը» որոշակի զեղչեր կտրամադրի: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ, որ ընկերությունը կարող է որոշակի սահմանաչափի պարտքեր կուտակել:

Հ. Հ.

Խոսքի ազատության օր Գյումրիում

Մարտի 25-ին Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնի հյուրասրահում հերթական անգամ տեղի կունենա խոսքի ազատության օրվա հանդիսությունը: Այդ օրը հատուկ նվերներով կպարգեւատրվեն իրենց աշխատանքով աչքի ընկած հայաստանյան լրագրողներն ու զանգվածային լրատվամիջոցները:

Ի. Պ.

Պատմության խեղաթյուրում

Նովրուզը կապ չունի մուսուլմանության հետ. հայ արիները այս օրերին տոնում են Վահագնի ծնունդը

«Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր եւ զծովն ծիրանի»:

Այս բառերով է հայոց պատմահայր Մովսես Խորենացին մեզ սկսում փոխանցել Գողթան երգիչների փառաբանած հայոց Վահագն աստծո ծնունդը:

Երեկ՝ մարտի 21-ին, հայ-արիները հանդիսավորապես ու մեծ շուքով տոնեցին Ամանորը: Արդարեւ, արիական ազգերի բուն նոր տարին գալիս է գարնան հետ՝ մարտի 21-ին: Արիական հանրույթներից այդ տոնը շարունակում են համաժողովրդական տարողությամբ նշել իրանական ազգերն ու ցեղերը՝ պարսիկները, տաջիկները, իրդերը, փուշտունները եւ այլք: Ինչպես շատ այլ դեպքերում, մեր արեւելյան հարեւանները, սեփական պատմություն ստեղծելու իրենց հետեւողական ջանքերի շարքին, իրենց կողոպտիչ ձեռքը երկարեցին նաեւ այս արիական տոնին: Դեռ իր իշխանության վերջին տարիներին «համայն ադրբեջանցիների հայր» Հեյդար Ալիեւը Նովրուզը մարտի 21-ը Ադրբեջանում պետական տոն հայտարարեց: Նրա որդին, շարունակելով հոր ավազակային ավանդույթները, տարեցտարի ավելի մեծ հանդիսավորություն է հաղորդում արիացիներից գողացված տոնին՝ անձամբ մասնակցելով տոնական միջոցառումներին, իհարկե չմոռանալով այդ օրն էլ բարբաջել «ազիզ Ղարաբաղը» վերադարձնելու մասին:

Հայկական դիցարան...

Ցավոք սրտի, այս խայտառակության համար մեղավորության մեծ բաժին ունենք մենք՝ հայերս, հատկապես Հայաստանի Հանրապետությունը իբրեւ պետություն: Մենք ոչ միայն հավուր պատշաճի չենք նշում մեր նախնիների այս փառապանծ տոնը, այլեւ մենք եւս խեղաթյուրում ենք տոնի էությունը: Կարելի էր մի կերպ հասկանալ Հայ եկեղեցու բացասական վերաբերմունքը այս տոնին. չէ՞ որ հայոց նախնյաց տոների վերացման կամ գլխիվար իմաստափոխման հաշվին Հայ եկեղեցին ունեցավ իր տոներից շատերը: Սակայն կարելի չէ ավելի խիստ չլինել ՀՀ-ի, նրա մտավորականության եւ լրատվամիջոցների նկատմամբ: Նրանք կա՛մ լռում են՝ հիմնովին մոռացության տալով իսկապես հայկական այս տոնը, կա՛մ էլ, ավելի վատ պահելով իրենց ու ցուցադրելով իրենց մարտական անգրագիտությունը, Նովրուզը հայտարարում են ... «մուսուլմանական նոր տարի»: Այս անձինք չգիտեն, որ մուսուլմաններն ունեն իրենց սեփական նոր տարին, որը նշվում է Մուհամմեդ մարգարեի Մեքքայից Մեդինա փախուստի տարեդարձի օրը՝ լուսնային տոմարով, եւ բնավ կապ չունի արիականության հետ: Իսլամի հիմնադիր արաբ ազգի հասարակ անդամները, նաեւ բազմատասնյակ ու հարյուրավոր միլիոն մուսուլման բնակչություն ունեցող Բանգլադեշի, Ինդոնեզիայի եւ այլ պետությունների ոչ միայն սովորական քաղաքացիները, այլեւ մուսուլման կրոնավորների հսկայական բանակի անդամները հեռավոր գաղափար իսկ չունեն Նովրուզի մասին... Մեր լրատվամիջոցների աչխատակիցներին երեւի շփոթի է մատնում այն իսկապե՛ս ողջունելի փաստը, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը, լինելով էությամբ հանդերձ իսլամական պետություն, պաշտոնապես՝ պետական ու ժողովրդական տարողությամբ տոնում է Նովրուզը: Ահա թե ինչպես պետք է հարգել սեփական պատմությունը՝ անկախ այսօրվա կրոնական համոզումներից: Իսկ մենք, որ այսօր շրջապատված ենք եւ մոտակա ապագային մնալու ենք շրջապատված թշնամի ու անբարյացակամ հանրույթներով, ճիգ իսկ չենք անում հայոց ռազմի եւ հրեղեն զորության աստված Վահագնի (Վահագն հենց այդ էլ նշանակում է՝ «հրեղեն զորության աստված») տոնի վերակենդանացմամբ ոգեղեն հավելյալ լիցք հաղորդելու հայ հասարակությանը... Տարբեր առիթներով ՀՀ քաղաքացի տարբեր շերտերին շնորհավորող ՀՀ նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահն ու այլ բարձրաստիճան պաշտոնյաներ երեւի չեն էլ մտածում այս տոնի առթիվ շնորհավորել հայ արիական հավատի հետեւորդներին...

Ամեն տարվա նման, այս տարի եւս Վահագնի ծնունդը մեծ տոնախմբությամբ նշեցին Հայ արիական միաբանության եւ Հայ ազգայնականների համախմբման խորհրդի անդամները: Մարտի 20-ին Արարատի մարզի Ազատավան գյուղում՝ գյուղի բնակիչ Իրմ Մանուկի տան թոնրի շուրջը տոնական ծիսակարգով զոհ մատուցվեց հայ աստվածներին ու նշվեց Հայոց Ամանորը՝ ուղեկցված աղոթքներով առ հայոց աստվածները, սուրբ գինու եւ սուրբ աղի օրհնությամբ: Մարտի 21-ին եւ 22-ին հայկական հավատի հետեւորդները շարունակեցին տոնախմբությունները Գառնիի մայր տաճարում եւ Գեղարդունիքի մարզի Ծովինար գյուղի մոտակա Թեյշեբայի ամրոցում, որը ժողովրդի մեջ ծանոթ է նաեւ Օձաբերդ անվամբ: Ըստ ժողովրդական հավատալիքների, ամեն տարի այս վայրում օձ-վիշապների միջեւ ահեղ կռիվներ են տեղի ունենում, եւ ամրոցում մեկ տարի ապրելու իրավունք է նվաճում վիշապների այն տոհմը, որը հաղթում է այդ մրցակցությունում: Տոնախմբություններին մասնակցում էին հայորդիներ ՀՀ-ից եւ սփյուռքից, նաեւ արիական ուրիշ ազգերի ներկայացուցիչներ, մասնավորաբար՝ պարսիկներ:

Ժամանակն է, որ գիտակցենք տոների հարցում մեր հանցավոր բացթողումների վտանգավոր հետեւանքները, կարողանանք տարբերակել ազգային հավատամքային արժեքներն օտարամուտներից ու տեր կանգնենք մեր ազգային արժեքներին, այդ թվում՝ հայոց տոներին:

ԳԵՎՈՐԳ ՅԱՔԵԲՅԱՆ

Ազերի Ալիեւներն ի՞նչ կապ ունեն արիական տոնի հետ:

Տագնապ

Արշակաք Անահիտ Հովսեփյանի «Որոգայթ» հոդվածին

Իմ սիրելի, հարազատ թերթի հիմնադրման 20-ամյակն էի ուզում շնորհավորել ջերմ, ուրախությամբ խոսքերով, բայց հանկարծ աչքս ընկավ Անահիտ Հովսեփյանի «Որոգայթ» խորագրով հոդվածին՝ վճռեցի իսկույն կարդալ... Ասված իմ, չկա՞ մի միջազգային զորավոր կազմակերպություն, որին հնարավոր լինի դիմել, դատի տալ անմեղ, արարիչ գործերով զբաղող մարդկանց՝ անսպասելի, հանիրավի այսպես վիրավորելու, խոցելու համար: Ես երեւի աչխարհի կեսում եղել եմ ու շատ ազգերի հետ եմ շփվել, երբ առիթ է լինում՝ անմիջապես խոսում եմ, առանձնացնում իմ ճանաչած ամենահարգելի ժողովուրդներից մեկին՝ գերմանացիներին: Ոչ մի տեղ եւ ոչ մի ազգի մոտ չեմ տեսել մարդկային արժանապատվության հանդեպ նման ակնածալից վերաբերմունք, որքան գերմանացու: Բնականաբար ներսումդ անմիջապես զուգահեռվում է «ֆաշիզմ» կոչվածը, եւ ոչ մի կերպ չես կարողանում այն տեղավորել գերմանական ազգի, տեսակի՛ շրջանակում: Ես չեմ հավատում, թե դրանք (լիդերները) զտարյուն գերմանացիներ են եղել: Կամ հոգեկան հիվանդ են եղել եւ կամ՝ ինչ-որ ընկեցիկ, խեղված էակներից սերված: Այլ կերպ չի կարող լինել: Ես այնքան ռոմանտիկ չեմ, որ կարծեմ, թե ազգը կարող է զերծ լինել այլանդակից, բայց եւ այնքան հոռետես չեմ, որ կարծեմ, թե «պտուղն» այդքա՞ն հեռու կարող է ընկնել ծառից: Այդ ծառն ինձ համար գերմանական բոլոր գրողներն ու արվեստագետներն են, ինտելիգենցիան, իմ մասնագիտության բերումով՝ Լեսինգն ու Գյոթեն, Շիլլերն ու Բեթհովենը, Բախը (այս թիվը կարելի է շարունակել երկա՜ր): Միայն մի բան չեմ հասկանում. գերմանական հեռուստաալիքում չգտնվե՞ց մի խելացի մարդ, որ ասեր՝ հայերն ո՞ւ-ուր, ազերիները՝ ուր: Ազերիներին Լենինը կոչում էր թուրք-թաքարներ: Մի՞թե ոչ ոք չգիտե, թե ինչպես նրանք հորդաներով ֆշվորներ են եղել եւ իրենց գրաված ու ապրած տարածքում դեռ քարը քարի վրա չեն դրել: Մի՞թե մարդիկ մոռացան, թե այդ ավարառու բարբարոսները ինչպիսի՜ բազմամանակությամբ խուժեցին եւ գրավեցին Բյուզանդիան... Այդ կերպ՝ Մերձավոր Արեւելքն ու նույնիսկ Եվրոպան... Քա՞ջ էին. ո՜-ո՜չ. պարզապես շատ էին ու անբարո. խուժում ու ավերում էին, հանկարծակիի բերում առավել քաղաքակիրթ ժողովուրդներին, գրավում նրանց ինչքը: Հենց այսօր հարցրեք ոչ թուրքական տարածքի յուրաքանչյուր կիպրոսցու եւ տեսեք, թե ինչպե՞ս են թուրքերը պարսպից ցատկում, թալանում հույներին ու տանում, ապրում՝ մինչեւ վերջանում է կողոպտածը եւ կրկին ելնում «արշավի»... Դա՛ է նրանց ապրելակերպը, նկարագիրը, տեսակը: Կույր պետք է լինել կամ կատարելապես խելագար, չտեսնելու համար Ղարաբաղի հինավուրց սմանչելի «Գանձասարը». տաճարային շինության շեդեվրներից մեկը, որով այնքան հարուստ էր եւ Նախիջեւանը, ուր մի «անլեզու» քար չկար, իսկ գերեզմանատունը՝ հրաշք էր՝ բաց երկնքի տակ (ի դեպ, նաեւ այն անձեռակերտ խաչքարերը, որ համառորեն ավերեցին ու փոշիացրին վերջին տարիներին՝ 20-րդ դարի Եվրոպայի աչքի առջեւ...): Հիմա՞ ինչ է արվում. օգնում են բարբարոսին, որ կուլ տա եւ ամենահին քաղաքակրթություն ունեցող, խաղաղ ու արարիչ ժողովրդի՞ն: Առանց այն էլ ծովից-ծով Հայաստանը մնացել է մի լճով ու մի ձեռքի ափ տարածքով: Վե՞րջը: Ոչ մի կերպ չեմ կարող հասկանալ, թե ինչպես եղավ, որ այնպիսի ինտելեկտուալ ազգ, որ գերմանացիք են, չունեցան մի գրագետ մարդ, որ իմանար, թե ո՞վ է հիմնադրել Շուշին (եւ նույնիսկ ամբողջ Բաքուն) եւ ո՞վ է եկել ու 1904թ. հայերի կոտորած սարքելով ոչնչացրել ու քշել հայերին, տիրացել նրա հողին ու շինությանը... Միայն տգեղը կհայտարարի՝ «Ադրբեջանական քաղաք Շուշի՞ն...»: Ամոթ չէ՞. ազերին կյանքում մի շնաբուն անգամ չի կառուցել: Ուրեմն ի՞նչ. Եվրոպայում կրթություն ստացած եւ Շուշին ծաղկեցնող հայ մտավորականությունը, որ իր քաղաքը կոչում էր «Քոքրիկ Փարիզ» ու դրախտավայր էր դարձրել, այսօր դարձավ քոչվորի՞նը... Գիտե՞ք, թե որքա՞ն հիվանդանոցներ ուներ, որոնք հիմնել ու պահում էին Գերմանիայում մասնագիտացած բժիշկները, որքա՞ն տպարաններ ուներ, որքա՞ն մշակույթի օջախներ, որ գաստրոլերի եկող ոչ մի արտիստ աչքաթող չէր անում: Անհարմա՛ր է, ամո՛թ է. այդ լոգիկայով՝ ուրեմն ազերը հայերի սիրո՞ւն նաեւ Ղազանչեցոց եկեղեցի՞ն են ստեղծել, այո՞: Ինչ է, չգիտե՞ք, որ նրանք միայն մտածում էին վերացնել ամեն մի քաղաքակրթություն եւ քրիստոնյայի ու նրա ստեղծածը: Մատնացույց արեք մի երկիր, մի քաղաք, որտեղ թուրքը կամ ազերին գեթ մի՞-ի տուն, շինություն կառուցած լինի... Եվ այնքան անամոթ է, որ զավթելուց հետո իր վայրենի «խմբագրումներն» է անում եւ իրենը սեղմում... Իսկ աչխարհը բարեհոգաբար լռում է. հերթը իրեն չի՞ հասնի: Միայն Բյուզանդական շինություններն ու Այա Սոֆիան հերիք չե՞ն՝ իրերին մի քիչ խելամիտ նայելու համար: Ի՞նչ է պատահել. Եվրոպան դարավոր նիրհի մե՞ջ է. մոռացե՞լ է, թե ինչպես «թուրքն անցավ» եւ իր արյունոտ հետքը թողեց... Հողի հետ ամենից առաջ նա գանձերն ու հարստությունը վերցրեց-տարավ, դիզեց այնքան, որ այսօր լիաբուռն բախշում-կաշառում է եւ խցկվում ամենուր: Տեսեք թե ինչեր է անելու... Դեռեւս տարիներ առաջ լինելով մերձբալթյան հանրապետություններում, նաեւ ուրիշ երկրներում, նկատեցի, թե որքա՞ն ազերիներ ու թուրքեր են այնտեղ ապրում ու աչխատում: Ասում էին, որ դեռեւս ժամանակին ավագ Ալիեւը շատ երիտասարդներ է ուղարկել եվրոպական երկրներում ռազմական գիտության, էկոնոմիկայի մեջ մասնագիտանալու: Օտար երկրներում լինելով, միմիայն մահազդներից ու ցավակցություններից զգացի, թե որքան ազերիներ են հաստատված այնտեղ եւ իրենց ձեռքն են վերցրել տնտեսությունը, ռեստորանները, ֆինանսները: Միայն հոգեւորին, մշակույթին չեն մոտենում... Ի՞նչ է դուրս գալիս. մեր ազգային ուղեղներն այդքան... միակողմանի՞ են:

Իսկ գիտե՞ք, թե երբվանից է հատուկ երիտասարդությունն ուղարկվում Եվրոպա՝ ուսանելու, որպեսզի ամուսնանան հեռանկար խոստացող տղաների ու աղջիկների հետ... Հարգա ռազմական ակադեմիանե՞րը. թե Մոսկվայի եւ թե Եվրոպայի: Եվ ահա արդյունքը. ամենուր նրանք են վճռորոշ բնագավառների ղեկի մոտ...

Ուրեմն անհեռատես ենք նաեւ մե՞նք, երբ այդ ամենը ամենաանմիջական կերպով մեզ է առնչվում: Մինչեւ ե՞րբ պետք է թշնամու աղվեսային ժպիտին հավատ ընծայենք ու ջանանք նրան հաճոյանալ: Այսօր նրանք են նկարում մերը, եւ աչխարհով մեկ ներկայացնում՝ որպես սեփականը, իսկ ի՞նչ ենք անում մենք: Մի կարգին փաստավավերագրական ֆիլմ ունե՞նք Արցախի մասին պատմող, մեր ունեցածը բարձրաձայնող: Ի՞նչ ենք հակադարձելու օտարին, թշնամուն... ժամանակը չէ՞ ավելի նպատակամետ ապրելու եւ թշնամական ձախավեր քարոզչությանը ճշմարտությամբ հակադարձելու: Գուցե «Սահմա՞նը» պիտի ներկայացնենք. կարծում ենք միմիայն մե՛զ կխայտառակենք: Հարկավոր է մոբիլիզացնել մեր ողջ ներուժը. պատմաբաններին, գրչի մարդկանց, միջազգային ճանաչում ունեցող բարձրակարգ ռեժիսորներին (Ա. Փելեշյան, Վ. Չալդրանյան, Հ. Խաչատրյան եւ այլք) եւ ժամ առաջ ստեղծել կարճ ու երկար ֆիլմեր՝ Արցախի, Շուշիի մասին, բազմացնել եւ ներկայացնել աչխարհի ամենատարբեր ալիքներով... այլապես մենք տանուլ կտանք հենց այն մարզում, որ մերն է եւ մենք մեզ ուժեղ ենք համարում... Գուցե պետք է մտածել նաեւ խմբովին համապատասխան հա՞յց, բողո՞ք ներկայացնել միջազգային ատյաններին, որ օրը ցերեկով մի ամբողջ երկիր՝ իր դարավոր պատմությամբ ու մշակույթով կուլ է տալիս... մի «արնոտ բերնով մարդակեր»... Շտապել է պետք. յուրաքանչյուր հապաղում վտանգավոր է:

ՎԱՐՈՒԺԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եթե Քադդաֆին չէ, ուրեմն «Քադդաֆի» չէ՞

Անգլո-ֆրանս-ամերիկյան օդուժն ռմբահարում է Լիբիայի ռազմավարական հենակետերը: Գործողությունը ֆորմալ առումով իրականացվում է ՄԱԿ-ի «հովանու ներքո»: Բայց Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդն ռազմական ուղղակի միջամտության արտոնություն չի տվել:

Այդուհանդերձ, որեւէ երկիր, գոնե պաշտոնապես, արեւմտյան կոալիցիայի ռազմական ձեռնարկումները չի դատապարտել: Բացառությամբ, իհարկե, Լիբիայի, սակայն դա արդեն ոչինչ չի ասում, քանի որ այդ երկրի առաջնորդի լեգիտիմությունը հազիվ թե որեւէ մեկը ճանաչում է:

Ակամա հարց է ծագում. «Ինչո՞ւ Քադդաֆին չանսաց միջազգային հանրության հորդորներին եւ չդադարեցրեց բռնությունները»: Նա, հավանաբար, հասկացել էր, որ իշխանությունը կորցնելու է: Սպասվում է, որ Քադդաֆին ուզում էր հեռանալ որպես հերոս, առաջնորդ, որին ոչ թե իր ժողովուրդը հեռացրեց, այլ՝ օտարերկրյա ներխուժումը:

Բայց նույնքան էլ տրամաբանական է հարցնել, թե միջազգային հանրությունը չգիտե՞ր արդյոք, որ Քադդաֆին բռնապետ է: Չէր կարող չիմանալ: Տրիպոլին փակ քաղաք չէր: Այնտեղ դեսպանատներ էին գործում, որոնք, անկասկած, իրենց մայրաքաղաքներին մշտապես տեղեկացնում էին այդ երկրում տիրող իրավիճակի մասին: Եվ չնայած դրան, Քադդաֆին մինչեւ վերջերս միջազգային գործուն շփումների մեջ էր, բանակցում էր, պայմանավորվում, պայմանագրություններ էր ընդունում եւ ճանաչվում, ինքն էր այցելում այս կամ այն երկիր՝ բեդվինական վրան խփելով որեւէ մայրաքաղաքի ամենակենտրոնական մասում:

Ի՞նչն էր խանգարում, որ Լիբիայի ժողովրդի «իրավունքների եւ ազատությունների ջատագով» Արեւմուտքը ժամանակին նրան հասկացներ, որ «գնդապետական եւ բեդվինական կենցաղի» ժամանակն արդեն սպառված է: Ոչինչ կարծես թե չէր խանգարում: Բայց ոչ ոք նրան ոչինչ չի ասել: Եվ նրան թվացել է, որ իրեն «ամեն ինչ թույլատրված է»:

Անշուշտ, կասկածի Լիբիայի ժողովուրդը: Քադդաֆիին կհեռացնեն: Բայց դրանից Լիբիայում քիչ բան կփոխվի: Եթե, իհարկե, չկրկնվի այն, ինչ տեղի է ունենում Աֆղանստանում կամ Իրանում:

Քադդաֆին եզակիություն չէ: Հետեւաբար, բացառված չէ, որ վաղը համանման խնդիր ծագելու է մեկ այլ երկրում նույնպես: Այնտեղ, որտեղ իշխանությունը ժողովրդավարական չէ: Որտեղ քաղաքացիների իրավունքները բռնաճնշվում են: Որտեղ «գահաժառանգությունն» է տիրում:

Այո, փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերում ոչինչ չի օգնում: Եվ նույնիսկ երեկվա մերձավոր դաշնակիցներն են երես թեքում: Ինչպես Լիբիայի պարագայում՝ Իտալիան:

Միջազգային հանրությունն, օրինակ, չի՞ տեսնում, որ Ադրբեջանը բոլորովին էլ ժողովրդավարական երկիր չէ: Չի՞ տեսնում, որ Իլհամ Ալիեւն իշխանության է եկել եւ այն պահում է ոչ օրինական միջոցներով: Չի՞ տեսնում, որ այդ երկիրը կատաղորեն զինվում է: Չի՞ լսում այն սպառնալիքները, որ հնչեցնում է Իլհամ Ալիեւը:

Ամեն ինչ տեսնում է, ամեն ինչ՝ լսում: Եվ, այդուհանդերձ, ոչինչ չի ձեռնարկում: Մի բան էլ ավելի՝ հսկայական ներդրումների միջոցով խթանում է Ադրբեջանի տնտեսությունը: Որովհետեւ դրանում շահ ունի նաեւ ինքը: Ադրբեջանական նավթը եւ գազը միջազգային շուկայում գին ունեն:

Բայց չէ՞ որ գին ուներ նաեւ իրաքյան նավթը: Գին ունի լիբիական նավթը: Եվ, ըստ երեւույթին, հենց այդ գինն է, որ ծնել է Քադդաֆի: Ծնել էր Սադդամ Հուսեյն, ում կախաղանի դատապարտեց «իրաքյան դատարանը»: Վաղը, գուցե, Լիբիայի «անցումային կառավարությունն» էլ մահվան վճիռ կայացնի Քադդաֆիի համար:

Իսկ Ադրբեջանի մասին ոչ ոք չի խոսի: Քանի որ Իլհամ Ալիեւը «Քադդաֆի» չէ: Իհարկե, այլ երկրներ այցելելիս նա «խաբնարածի թաղիքավաճառ» չի խփում: Երեւի ազգայինից գերադասում է եվրոպական խոհանոցը: Ադրբեջանի առաջին տիկինն էլ զերծ է արեւելյան կաբկանդվածությունից:

Բայց, միեւնույնն է, Իլհամ Ալիեւը եթե ոչ այսօրվա, ապա հաստատ վաղվա Քադդաֆին է: Քանի որ քաղաքակիրթ երկխոսությունից գերադասում է սպառնալիքը: Քանի որ նույնպես շլացած է իր երկրի հնարավորություններից եւ կարծում է, թե իրեն ամեն ինչ ներելի է: Այդ թվում՝ ԼՂ հայ մեծամասնության ֆիզիկական բնաջնջումը կամ բռնատեղահանումը, եթե վերջինս «չընդունի Ադրբեջանի գերիշխանությունը»:

Շատ հնարավոր է՝ վաղն Իլհամ Ալիեւը հրամայի, որ իր երկրի օդուժը ռմբակոծի Ստեփանակերտն ու Արցախի մյուս խաղաղ բնակավայրերը: Այդ դեպքում, անշուշտ, նա արժանի հակահարված կստանա: Եվ երեւի միջազգային հանրությունն էլ կձեռնարկի ինչ-ինչ քայլեր՝ կանգնեցնելու աղետը: Բայց ինչու՞ սպասել, որ դա տեղի ունենա:

Եթե կա «Քադդաֆի», ապա նա մի օր իրեն զգալ է տալու: Ավելի հեշտ է թույլ չտալ, որ մեկը «Քադդաֆի» դառնա: Քանի որ եթե կա «Քադդաֆի» դառնալու գայթակղություն, եթե այդ գայթակղությունն ի սկզբանե չի հակազդվում, ապա մարդկությունն ստիպված է լինում ահռելի միջոցներ ծախսել, որպեսզի չարիքը վերացնի: Մինչդեռ ավելի հեշտ է թույլ չտալ, որ այն ծնվի:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՆԱՏՕ-ն ավերել է Քադդաֆիի հրամանատարական կենտրոնը

Շաբաթօրյա համարում «**Ազգը**» գրել էր Լիբիայի վրա թռիչքազերծ գոտի ստեղծելու վերաբերյալ ՄԱԿ-ի Ախ ընդունած բանաձեւի եւ Մուամմար Քադդաֆիի հակազդեցության մասին: Բանաձեւի առաջնահերթ նպատակն է թույլ չտալ, որ Քադդաֆիի հրետանին եւ օդուժը ավերներ գործեն Լիբիայի արեւելքում եւ մասնավորապես ապստամբների գլխավոր քաղաք Բենգազիում:

RFI ռադիոկայանը հաղորդում է, որ արդեն լույս շաբաթ գիշերը կառավարական զորքերը տանկերով փորձել են ներխուժել Բենգազի, բայց ֆրանսիական «Ռաֆալ» ռազմօդանավերը ոչնչացրել են այդ զրահատեխնիկան: Ավելի ուշ Միջերկրական ծովի ամերիկյան եւ բրիտանական ռազմանավերից ու սուզանավերից հրթիռակոծվել են մայրաքաղաք Տրիպոլիի մի շարք վարչական շենքեր: Հակալիբիական կոալիցիայի ուժերը մերժում են հրադադար կնքելու Քադդաֆիի առաջարկությունը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ մարտի լույս 21-ի գիշերը ռազմանավերից նոր հարվածներ են հասցվել Լիբիայի տարածքում գտնվող որոշ օբյեկտների: Տրիպոլիում լիովին ավերվել է Քադդաֆիի նստավայրի տարածքում գտնվող հրամանատարական կենտրոնի շենքը:

«ՄԱԿ-ի Ախ բանաձեւի շրջանակներում մենք շարունակում ենք խոցել այն թիրախները, որոնք անմիջական սպառնալիք են Լիբիայի ժողովրդի համար եւ խանգարում են թռիչքազերծ գոտու ստեղծմանը», հայտարարել է կոալիցիոն ուժերի ներկայացուցիչը: Հիշյալ ավերված շենքից 50 մետր հեռու այն վրանն է, որտեղ Քադդաֆին սովորաբար ընդունում էր հյուրերին: Թե նա ինքը որտեղ է, այժմ հայտնի չէ: RFI ռադիոկայանի տվյալներով, Լիբիայի հեռուստատեսությամբ մերթ ընդ մերթ ցուցադրվում են Քադդաֆիի հին ելույթները:

ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսի խոսքերով, ամերիկացիները մտադիր չեն առաջատար դեր խաղալ հակալիբիական գործողության մեջ եւ շուտով հրամանատարությունը կհանձնեն Ֆրանսիային կամ Մեծ Բրիտանիային, որոնք չպետք է թույլ տան լիբիական օդանավերի թռիչքներ: Գեյթսը ավելացրել է, որ իրադրության ներքին կարգավորումը պետք է թողնել լիբիացիներին:

Արաբական պետությունների լիգայի նախագահ Ամր Մուսան դատապարտել է լիբիական օբյեկտներին ՆԱՏՕ-ի օդուժի եւ ծովուժի հասցրած հարվածները, թեեւ կողմ է թռիչքազերծմանը: Ի դեպ, հենց ՆԱՏՕ-ի ներսում տարաձայնություններ կան ռազմական միջամտության առնչությամբ. Գերմանիան եւ Թուրքիան դեմ են թռիչքազերծ գոտու ստեղծմանը եւ մյուս ռազմական գործողություններին: Ռուսաստանն իր հերթին հանդես է եկել ՆԱՏՕ-ի ձեռնարկման քննադատությամբ:

ԱՄՆ զինված ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ, ծովակալ Մայքլ Մալլենը հայտարարել է, որ Լիբիայում գործողությունը թեեւ հաջող է սկսվել, բայց դրա ելքը մնում է անորոշ: Նա զգուշացրել է, որ ռազմարշավը կարող է երկար տեւել:

ՀԱՊՈՆԻԱ

«Ֆուկուշիմա-1»-ի էլեկտրամատակարարումը վերականգնված է

Երկրաշարժի եւ ցունամիի վնասը՝ 235 մլրդ դոլար

Ճապոնացի մասնագետները երեկ վերականգնել են վթարված «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի 3-րդ եւ 4-րդ ռեակտորների էլեկտրասնուցումը: Այսպիսով, ԱԷԿ-ի բոլոր էներգաբլոկների էլեկտրամատակարարումը վերականգնված է: Դա անհրաժեշտ է հովացման համակարգերի վերագործարկման համար, նշում է Ռոյթեր գործակալությունը:

Վարչապետ Նաոտո Կանի խոսքերով, ատոմակայանում իրավիճակն աստիճանաբար կարգավորվում է:

«Ֆուկուշիմա-1»-ի ռեակտորներն ունեն պաշտպանության բազմաշերտ համակարգ: Ներկայումս այն վնասված է լոկ աննշան չափով, բայց ավազով ծածկելը կարող է վնասել համակարգը եւ միայն վատթարացնել իրավիճակը:

Կառավարության գլխավոր քարտուղար Յուկիո Էդանոյի հայտարարությունը վկայակոչելով, Ֆրանսպրեսը հաղորդում է, որ իշխանությունները մտադիր են փակել «Ֆուկուշիմա-1» վթարված ԱԷԿ-ը:

Ներկա փուլում երկրի իշխանությունները բացառում են վթարված ռեակտորի վրա ավազ լցնելու եւ շտաբ բետոնապատելու տարբերակը, սակայն որոշ փորձագետներ «չեռնոբիլյան» սցենարը (բետոնապատումը) հնարավոր են համարում ապագայում՝ հովացման ներկայիս աշխատանքների ավարտից եւ բոլոր ուժային կայանքների հսկողության վերականգնումից հետո:

Ինչ վերաբերում է մարտի 11-ի երկրաշարժի եւ դրա առաջացրած ցունամիի վնասներին, դրանք գնահատվում են գրեթե 235 մլրդ դոլար, որ կազմում է Ճապոնիայի ՆՀԱ 4 տոկոսը: Այդ մասին ասվում է Համաշխարհային բանկի մամլո տեղեկագրում, որը նվիրված է Արեւելյան Ասիայում տարեային աղետի հետեւանքների տեսությանը:

Բահրեյնի սուլթանը խոսեց ապստամբության «հաջող ճնշման» մասին

Բահրեյնի զինծառայողները «հաջողությամբ ճնշել են արտերկրի դավադիրների կազմակերպած ապստամբությունը»: Երեկ զինվորականների առջեւ նման հայտարարություն է արել երկրի սուլթան Համադ բեն Իսա ալ Խալիֆան, նշում է Ռոյթեր գործակալությունը:

Միապետի խոսքերով, օտարերկրացիները Բահրեյնում (եւ Պարսից ծոցի այլ երկրներում) հեղաշրջում էին նախապատրաստում վերջին 20-30 տարիներին, իսկ 2011-ին նրանք «դիմեցին ակտիվ գործողությունների»:

Թագավորը զինվորականներին շնորհակալություն է հայտնել վարչակարգին սպառնացող վտանգի չեզոքացման համար: Նա միաժամանակ երախտագիտության խոսք է ասել օտարերկրացի զինծառայողներին, որոնք օրերս Բահրեյն էին եկել ապստամբությունը ճնշելու («Ազգը» գրել է այդ մասին):

Բահրեյնում հակակառավարական ելույթները սկսվել էին փետրվարի կեսերին: Շիա մեծամասնությունը ներկայացնող ցուցարարները կառավարող սուննի գահատոհմից պահանջում էին քաղաքական եւ քաղաքացիական միատեսակ իրավունքներ ամենքի համար: Ոստիկանության հետ բախումների հետեւանքով եղան զոհեր եւ վիրավորներ:

Մարտին ցուցարարները գրավեցին մայրաքաղաք Մանամայի գլխավոր հրապարակը: Միապետը երկրում մտցրեց արտակարգ դրություն եւ հարեւան պետություններից օգնության կանչեց զորքեր եւ ոստիկանություն: Մարտի 16-ին ուժի գործադրմամբ ցուցարարները ցրվեցին, իսկ հաջորդ օրը ձերբակալվեց ընդդիմության մի քանի առաջնորդ: Դրանից հետո բողոքի ելույթների թափը կոտրվեց:

Կահիրեում Քադդաֆիի կողմնակիցները փորձել են հարձակվել Բան Կի Մունի վրա

Կահիրեում Մուամմար Քադդաֆիի մի խումբ կողմնակիցներ փորձել են հարձակվել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի վրա: Միջադեպը տեղի է ունեցել Թահրիր հրապարակում, հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Երբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը դուրս է եկել Արաբական պետությունների լիգայի կենտրոնակայանից, նրան շրջապատել են Քադդաֆիի կողմնակից մոտ 50 լիբիացի ցուցարարներ, որոնք նետվել են դեպի Բան Կի Մունը եւ նրա թիկնապահները: Ցուցարարների ձեռքերին եղել են Քադդաֆիի դիմանկարներ եւ ԱՄՆ-ի ու ՄԱԿ-ի քաղաքականությունը դատապարտող պաստառներ: Թիկնապահների օգնությամբ Բան Կի Մունը վերադարձել է շենք եւ դուրս եկել ուրիշ ելքից:

Լիբիացի ցուցարարները, ըստ երեւույթին, զայրացած էին ՄԱԿ-ի Ախ թիվ 1973 բանաձեւի ընդունումից, ըստ որի արգելվում են լիբիական օդանավերի թռիչքները, իսկ միջազգային ընկերակցությանը թույլատրվում է թռիչքազերծ գոտու ռեժիմն ապահովել ռազմական միջոցներով:

ԱԶԳ

Օրվա հետքերով

Փոփոխություններ ընտրական օրենսգրքում

Հերթական շեւականությո՞ւնը, թե՞ քայլ առաջ դեպի ժողովրդավարություն

Կիսադասարակ դահլիճում երեկ առաջին ընթերցմամբ խորհրդարանականների ուշադրությանը ներկայացվեց «ՀՀ ընտրական օրենսգրքի» եւ դրան հարակից 6 օրենքներում փոփոխություններ նախատեսող փաթեթը: Փոփոխությունների նախագիծն ուղարկվել է Վենետիկի հանձնաժողով. փորձագիտական կարծիքը կներկայացվի աորիլին:

Պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Դավիթ Հարությունյանի** գնահատմամբ՝ փոփոխված տարբերակով օրենսգիրքն էականորեն տարբերվում է նախորդից: Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 7 անդամները պետք է ունենան աշխատանքային փորձ եւ մասնագիտական պատրաստվածություն: Նրանցից 4-ին կնշանակի մարդու իրավունքների պաշտպանը, մյուս 3-ին կնշանակեն մարդու իրավունքների պաշտպանը, Փաստաբանների պալատի նախագահն ու Վճռաբեկ դատարանի նախագահը՝ յուրաքանչյուրը մեկ թեկնածու սկզբունքով: 7-հոգանոց ԿԸՀ անդամներից առնվազն երկուսը պետք է լինեն իրավաբաններ, երկուսը՝ կանայք: Օրինագիծն առաջարկում է տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ ՏԸՀ, կազմավորել ԱԺ խմբակցությունների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի եւ հանրաքվեության նախագահի մեկական անդամի նշանակմամբ: Առաջարկվում է քվեարկության օրվանից 30, 20, 10 օր առաջ եւ քվեարկության նախորդ օրը հրապարակել ընտրողների ընդհանուր թիվը, դրա հետ մեկտեղ նշել յուրաքանչյուր ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը:

Դավիթ Հարությունյանի մեկնաբանությամբ՝ նոր օրինագիծը լուծում է տալիս նաեւ նախընտրական շրջանում բարեգործական ծրագրերին: Ակնհայտ է, որ հենց ընտրության նախաշեմին հատկապես իշխանական կուսակցությունները սկսում են բարեգործական գործունեություն իրականացնել՝ բժշկական օգնություն, սոցիալական աջակցություն, ծրագրեր՝ նվիրված մանուկներին ու երիտասարդներին, որոնք ակնհայտ քարոզչություն են:

«Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել որոշակի թեկնածուներին կամ կուսակցություններին, նախընտրական քարոզչության ժամանակ իրավունք չունեն իրականացնելու բարեգործություն», ասաց Հարությունյանը: Հավասարություն կլինի նաեւ թեկնածուների կամ կուսակցությունների գովազդային պատասխանների առումով:

5 ֆմ գերազանցող գովազդային վահանակները թեկնածուների միջեւ կբաշխվեն հավասարապես: Եթե չի խախտվում ընտրական գաղտնիության սկզբունքը, ապա քվեարկության ողջ գործընթացը կարող են տեսանկարահանել բոլորը՝ վստահված անձ, դիտորդ կամ լրագրող: Նոր օրինագծով մեծացել է նաեւ կանանց ներգրավվածությունը. 20 %՝ սկսած 6-րդ տեղից: Տեղական դիտորդներն էլ պետք է աչքի ընկնեն պատշաճ գիտելիքներով: Նրանց որակական հատկանիշները կապացուցվեն համակարգչային քննության ժամանակ:

Փոփոխություններ կան նաեւ անձնագրերում կնիքների առկայության վերաբերյալ: Վենետիկի հանձնաժողովի փորձագետների մեկնաբանությամբ՝ ընտրության մասնակցողի անձնագիր կնքելը մարդու իրավունքների կոպիտ խախտում է. հետեւաբար նոր օրենքով անձնագրում կդրվի ժամանակավոր կնիք: Արդարադատության նախարար **Հայր Թովմասյանի** գնահատմամբ՝ ընտրական օրենսդրության հարցում պետությունը դեռեւս արդյունավետ մոդելների փնտրտուքների մեջ է: «Որ այս անգամ արմատապես փոփոխվել է ընտրական հանձնաժողովների ձեւավորման կարգը, տրամաբանված է այն առումով, որ քաղաքացիության նկատմամբ վստահության բարձրացմանը զուգահեռ, ասիճանաբար պետք է հրաժարվել կուսակցական հավասարակշռման մոդելով հանձնաժողովների ձեւավորման եղանակից, որը արդյունավետ չի աշխատում»: Գնահատելով նախորդ տարիների փորձերը՝ նախարարն ասաց, որ շատ դեպքերում գործող համակարգն «իրացիոնալ երեւույթներ» է ստեղծել:

«Հանձնաժողովների հատկապես կուսակցական անդամներն իրենց դիտարկում էին որպես նշանակված քաղաքական ուժի շահերի պաշտպան: Բացառություն են եղել դեպքեր, երբ նրանք առաջնորդվել են օրենքի տառով»:

Նախարարը առաջընթաց է համարում, որ այսուհետեւ ԿԸՀ ու ԸԸՀ մարմիններում ընդգրկվելու համար նախապատվություն են տալու անաչառությանն ու անկախությանը:

Դավիթ Հարությունյանի եւ Հայր Թովմասյանի լավատեսությունը չկիսեցին հատկապես ՀՅԴ պատգամավորները:

«Ինչո՞ւ ամեն անգամ, հենց ընտրություններ են մոտենում, մեր երկրում, հանկարծ պարզվում է, որ ընտրական օրենսգիրքը լավը չէ, եւ պետք է փոփոխություններ անել: Ինչո՞ւ անցյալ անգամ չէր կարելի անել այդ փոփոխությունները, եւ ո՞ւր են երաշխիքները, որ ամեն ընտրությունից առաջ, նախորդ ընտրությունների փորձը հաշվի առնելով չեն ստեղծվի նոր նախադրյալներ՝ ընտրություններում աղաղակող իշխանության վերարտադրությունը», հարց-ելույթում ասաց **Վահան Հովհաննիսյանը**:

ՀՅԴ պատգամավոր **Արա Նռանյանի** առաջարկությամբ՝ պետք է արգելվի զինվորներին մասնակցել քվեարկությանը: Դավիթ Հարությունյանի գնահատմամբ՝ նման որոշումը կլինի բացահայտ անհամաչափ, որովհետեւ այդ կերպ կխախտվի զինվորների սահմանադրական իրավունքը:

«Ի՞նչն եք փոխել, ի՞նչն եք բարելավել: Այս օրինագիծը խրախուսում է ոչ միայն ընտրախախտումները, օլիգարխիկ համակարգը ընտրությունների վրա ազդեցությունը, այլեւ նոր հիմքեր ստեղծում ժողովրդական զանգվածների կարծիքը հաշվի չառնելու ուղղությամբ: Ընտրական օրենսգրքի այս տարբերակը մարտի 1-ի քաղաքական պատճառները չի լուծում եւ ստեղծում է նոր հիմքեր՝ ոչնահարելու սահմանադրությունը: Այս օրինագիծը պետք է արժանանա բացասական վերաբերմունքի», ասաց **Արծվիկ Մինասյանը**:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փետրվարին տնտեսական ակտիվության 1,4 տոկոս աճ

Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը փոքր-ինչ նվազել է

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2011-ի փետրվար ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 1,4 տոկոս: Հիշեցնենք, որ սկսած այս տարվանից, Ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը: Փոխարենը, որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ, ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը, իսկ ՀՆԱ ցուցանիշները հրապարակվելու են եռամսյակային եւ տարեկան կտրվածքով: Նոր մեթոդին անցումը վիճաբանությունը կատարել է Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ Եվրոմիության փորձագետների խորհրդատվության հիման վրա:

Այսպիսով, տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա փետրվարի նկատմամբ աճել է 1,4 տոկոսով, իսկ այս տարվա հունվարի նկատմամբ՝ 3,7 տոկոսով: Նախորդ տարվա փետրվարի համեմատ աճ են արձանագրել մեր տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, բացառությամբ շինարարության: Մասնավորապես, արդյունաբերությունը այս տարվա փետրվարին 2010-ի փետրվարի նկատմամբ աճել է 2,6 տոկոսով, իսկ այս տարվա հունվարի նկատմամբ՝ 5,5 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 22,1 տոկոսով, հունվարի նկատմամբ նվազել 9,9 տոկոսով: Շինարարությունն ունեցել է 4,1 տոկոս անկում, իսկ հունվարի նկատմամբ 26,3 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա փետրվարի նկատմամբ 6,3 տոկոս աճ է արձանագրվել, իսկ հունվարի նկատմամբ 11,1 տոկոս անկում: Մանրածախ առեւտրում արձանագրվել է չնչին՝ 0,1 տոկոս աճ անցյալ տարվա փետրվարի համեմատ, իսկ հունվարի նկատմամբ գրանցվել է 19,9 տոկոս աճ: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը փետրվարին նույնպես աճել է 0,1 տոկոսով, իսկ հունվարի նկատմամբ՝ 26,3 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի փետրվարին 2010-ի փետրվարի նկատմամբ ավելացել է 12,4 տոկոսով եւ կազմել 364,5 մլն դոլար: Արտահանումը կազմել է 90 մլն դոլար, արձանագրելով 32 տոկոս աճ, իսկ փետրվարին հունվարի նկատմամբ՝ 35,7 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 274,5 մլն դոլար, նախորդ տարվա փետրվարի համեմատ աճելով 7,2 տոկոսով, իսկ այս տարվա հունվարի համեմատ՝ 6,7 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 184,5 մլն դոլար: Ուշադրության արժանի մեկ փաստ՝ հունվարի ցուցանիշի համեմատ բացասական հաշվեկշիռը փոքր ինչ նվազել է՝ 189 մլն դոլարից հասնելով 184,5 մլն դոլարի:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում փետրվարին կազմել է ավելի քան 105 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 131 հազար դրամ, պետականում՝ 89 հազար դրամ:

Եթե համադրենք փետրվարի ցուցանիշները նախորդ տարվա փետրվարի հետ, ապա միակ անկում արձանագրած ոլորտը շինարարությունն է, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ու մանրածախ առեւտրի ծավալներն էլ գրեթե մնացել են անփոփոխ, իսկ եթե փետրվարի ցուցանիշները համադրենք հունվարի հետ, ապա անկում է արձանագրվել միայն ծառայությունների ոլորտում: Մնացած ցուցանիշներն աճ են արձանագրել: Մնում է միայն հուսալ, որ աճի միտումը կդառնա կայուն եւ տեսանելի մեր առօրյա կյանքում:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի 2010թ. գործունեության մասին

1.Հիմնադրամի լրիվ անվանումը՝ **«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ**
2.Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի կողմից **28.04.2004թ.**, պետական գրանցման վկայական թիվ 03Ա064891;
3.Հիմնադրամի գտնվելու վայրը՝ **Երեւան, Մաշտոցի 49/7, հեռախոս՝ 51-20-70; 51-20-72, ֆաքս՝ 51-20-76**

7.Իրականացված ծրագրերը՝
7.1. Նիդեռլանդների թագավորության արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ (MATRA) իրականացվել է «Հաղորդակցության բարելավումը համայնքներում» ծրագիրը ՀՀ 13 քաղաքներում;
7.2. Շվեցարիայի զարգացման եվ համագործակցության գործակալության Հայաստանյան գրասենյակի (SDC) ֆինանսավորմամբ իրականացվել է ,Հանրային կրթություն հանուն շրջակա միջավայրի բարելավման է ծրագիրը;
7.3. ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ իրականացվել է «Հաղորդակցություն առանց սահմանների» ծրագիրը: Ալավերդի եւ Նոյեմբերյան համայնքներում համայնքային գրադարանների հիմքի վրա ստեղծվել են երկխոսության կենտրոններ, որտեղ քննարկվում են համայնքի բնակչությանը հուզող տարբեր խնդիրներ եւ առաջարկվում համապատասխան լուծումներ;
7.4. «Հաբիթաթ ֆոր Հյումանիթի ինթերնեյշընալ» կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվել է Հայաստանի բնակարանային ոլորտի ուսումնասիրություն:
7.5. Եվրոպական հանձնաժողովի ֆինանսավորմամբ իրականացվել է «Մարդու իրավունքների կրթություն. քայլ առաջ» ծրագիրը «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի հետ համատեղ:
7.6. «Կապանի փոքր ֆերմերների ասոցիացիա»-յի պատվերով մատուցվել են վճարովի ծառայություններ («Առաջնորդություն եվ կառավարում» թեմայով դասընթացի անցկացում):
8.Ֆինանսավորման աղբյուրները՝
8.1. Նիդեռլանդների թագավորության արտաքին գործերի նախարարություն (MATRA)- 40162766

8.2. Շվեցարիայի զարգացման եվ համագործակցության գործակալության Հայաստանյան գրասենյակ (SDC)	***7232000***
8.3. ՀՀ-ում ԱՄՆ Դեսպանատուն	***2868494***
8.4. Հաբիթաթ ֆոր Հյումանիթի Ինթերնեյշընալ	***1849025***
8.5. Եվրոպական հանձնաժողով	***2858084***
8.6. Կապանի Փոքր ֆերմերների ասոցիացիա	***376400***
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝	51281.4
10.Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝	51281.4

11.Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտ չի իրականացվել, քանի որ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպության ակտիվների գումարը փոքր է 10 000 000 (տասը միլիոն) դրամից:
12.Հաստատված է հոգաբարձուների խորհրդի 01.03.2011թ. թիվ 15 նիստում:

«ՈՒՐԲԱՆ» ԿՀՀ տնօրենի պաշտոնակատար ***Սամվել Նազարյան***
Հաշվապահ ***Կարինե Ղարիբյան***

Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայկական Ինտերնետ Տրաֆիկի Փոխանակման «ԱՐՄԻՔՍ» հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին

1. Հայկական Ինտերնետ Տրաֆիկի Փոխանակման «ԱՐՄԻՔՍ» հիմնադրամի 2010թ. գործունեության մասին
2. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Հայկական Ինտերնետ Տրաֆիկի Փոխանակման «ԱՐՄԻՔՍ» հիմնադրամ:
3. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 06ե մայիս 2010թ., պետական գրանցման վկայական՝ 03 Ա 088269:
4. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, 0001, 29 Նալբանդյան փող., բն. 36, հեռ. (010) 548881:
5. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Վահան Հովսեփյան, աշխատավարձի ձեւով:
6. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հաշվետու ժամանակաշրջանում չեն օգտվել հիմնադրամի միջոցներից:
7. Աշխատակազմը՝ Արմինե Շահբազյան, աշխատավարձի ձեւով:
8. Իրականացված ծրագրեր՝ հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամի կողմից ծրագրեր չեն իրականացվել:
9. Ֆինանսավորման աղբյուրները՝ 2.055.007 (երկու միլիոն հիսունհինգ հազար յոթ) ՀՀ դրամ այդ թվում՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ՝ 300.000 ՀՀ դրամ, «Օրանժ-Հայաստան» ՓԲԸ՝ 100.000 ՀՀ դրամ, «Յուլոմ» ՍՊԸ՝ 300.000 ՀՀ դրամ, «Արպագա Թեքնոլոջիս» ՓԲԸ՝ 300.000 ՀՀ դրամ, «Ինտերնետ Հանրություն» ՀԿ՝ 100.000 ՀՀ դրամ, «Վեբ» ՍՊԸ 400.000 ՀՀ դրամ, «Արմինկո» ՍՊԸ 300.000 ՀՀ դրամ, «Ռ Տելոկոմ» ՓԲԸ 200.000 ՀՀ դրամ, փոխառություն Վահան Հովսեփյանից՝ 55.000 ՀՀ դրամ, բանկային տոկոսների սացում՝ 7 (յոթ) ՀՀ դրամ:
10. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 2.038.690 (Երկու միլիոն երեսունութ հազար վեց հարյուր ինսուն) ՀՀ դրամ:
11. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 2.038.690 (Երկու միլիոն երեսունութ հազար վեց հարյուր ինսուն) ՀՀ դրամ:
Տարեկան հաշվետվությունը հաստատված է Ինտերնետ Տրաֆիկի Փոխանակման ԱՐՄԻՔՍԵ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ արձանագրություն թիվ 2 21.01.2011թ.

Տնօրեն՝ ***Վահան Հովսեփյան***

Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի
Ձեւ

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ջերմուկ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Ջերմուկ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «23» հուլիս 2007 թ., պետական գրանցման վկայական՝ 03Ա075189:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8, հեռ. 0-287-2-21-01:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Գեւորգ Վարդանի Հովհաննիսյան, աշխատավարձի ձեւով:
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 7 (յոթ) անդամներից եւ չի օգտվել հիմնադրամի միջոցներից:
6. Աշխատակազմը՝ Լիա Սոսի Արշակյան- գլխ. հաշվապահ, աշխատավարձի ձեւով:
7. Իրականացված ծրագրեր՝ հիմնադրամը 2010 թ.-ի ընթացքում ձեռք է բերել աղբանիներ, ինչպես նաեւ հատկացվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին:
8. Ֆինանսավորման աղբյուրները - Հիմնադրամի միջոցները գոյացել են իրավաբանական եւ ֆիզիկական անձանց դրամաշնորհներից՝ 3760000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) դրամ:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 3760000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) դրամ:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 2620750 (երկու միլիոն վեց հարյուր քսան հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ ***Վ. Հովհաննիսյան***
Տնօրեն՝ ***Գ. Հովհաննիսյան***
Գլխավոր հաշվապահ՝ ***Լ. Արշակյան***

Անատոլի Բիշովեցը բարձր է գնահատում ՀՀ հավաքականին

Երեկ «Նովոստի-Արմենիա» մամուլի ակումբում Երեւան-Մոսկվա հեռուստակամուրջ էր կազմակերպվել, որը նվիրված էր մարտի 26-ին Երեւանում կայանալիք Հայաստան-Ռուսաստան ֆուտբոլային ընտրական մրցախաղին: Ռուսական կողմը ներկայացնում էր խորհրդային անվանի ֆուտբոլիստ ու մարզիչ **Անատոլի Բիշովեցը**: Հայկական կողմից միջոցառմանը մասնակցեցին ԽՍՀՄ չեմպիոն ու կրկնակի գավաթակիր, «Արարատ-73»-ի անվանի վետերան, հայկական ֆուտբոլի վետերանների միության նախագահ **Սերգեյ Պողոսյանն** ու մարզական մեկնաբան **Կարեն Գիլոյանը**:

Առաջինն իր նկատառումները հայտնեց Անատոլի Բիշովեցը: Նա առանձնացրեց երկու գլխավոր գործոններ, որոնք կարող են ազդել առաջիկա մրցակցության ելքի վրա: Առաջինը հոգեբանական գործոնն է, որը ՌԴ հավաքականի համար ներկայումս որոշ չափով բացասական է, քանի որ վերջին 2 ընկերական հանդիպումներում պարտվել է՝ լրատվամիջոցների քննադատության թիրախ դառնալով: Բացառված չէ, որ սա ինչ-որ չափով ազդի մեր հավաքականի գործողությունների վրա: 2-րդ գործոնը ֆուտբոլիստների վարժեցությունն է, որն ըստ Բիշովեցի, դրական է ռուսների համար: ՌԴ հավաքականը հիմնականում կազմավորված է երկու ակումբների՝ «Զենիթի» եւ ԲԿՄԱ-ի ֆուտբոլիստներով, որոնք Եվրոպայի լիգայի հանդիպումներում խաղային զգալի փորձ ու հմտություն, ինչպես նաեւ խաղային պրակտիկա են ձեռք բերել: Հաշվի առնելով նաեւ ՌԴ հավաքականում հանդես եկող լեգեոնականների խաղային որակները, Բիշովեցը որոշ առավելություն է տալիս իր ընտրանուն:

Միեւնույն ժամանակ Բիշովեցը բարձր գնահատեց Հայաստանի հավաքականի խաղը: Նա ժամանակին մարզել է մեր ֆուտբոլիստներից երկուսին՝ Ռոման Բերեզովսկուն ու Սարգիս Հովսեփյանին, որոնց իսկական պրոֆեսիոնալներ է համարում: Հայաստանի ներկա հավաքականը Բիշովեցը որակեց որպես փորձի ու երիտասարդության համաձուլվածք, որը մեծ ներուժ ունի, ինչը դրսեւորվեց Եվրո-2012-ի ընտրական մրցախաղերում: Երիտասարդներից Բիշովեցն առաջին հերթին առանձնացրեց Հենրիխ Մխիթարյանին ու Յուրա Մովսիսյանին, նշեց նաեւ Էդգար Մանուչարյանին, Լեւոն Փաչաջյանին, որոնց խաղը լավ տպավորություն է թողել նրա վրա: Ըստ Բիշովեցի, հայ ֆուտբոլիստները մշտապես աչքի են ընկել իրենց տեխնիկական պատրաստվածությամբ, որոնց հետ հաստատես Երեւանում խաղալը շատ դժվար է: Իսկ ներկայումս դրա հետ մեկտեղ հայ ֆուտբոլիստները նաեւ մեծ դիմադրողականություն ու

բնավորություն են դրսեւորում, ինչն ավելի է դժվարացնում նրանց մրցակիցների գործը:

Բիշովեցը կարեւորեց նաեւ տեղացի մարզչի գործոնը. «ՀՀ հավաքականը մարզում է Վարդան Մինասյանը, որը նաեւ «Փյունիկի» գլխավոր մարզիչն է ու շատ լավ ծանոթ է ֆուտբոլիստների խաղային ունակություններին: Նա հնարավորություն ունի տակտիկական տարբեր սխեմաներ ընտրել՝ խաղալ 2 հարձակվողով կամ 4+3+3 տարբերակով»:

Բիշովեցը լավ է հասկանում, որ Եվրո-2012-ի ուղեգիր նվաճելու լավ հնարավորությունը մեծ խթան է հայ ֆուտբոլիստների համար, որոնք ամեն կերպ կջանան օգտագործել հարմար պահը: Բացի այդ, մրցաշարային աղյուսակում ստեղծված իրավիճակն էլ խոստանում է անհաշտ ու դիտարժան պայքար: Ուղեգրերի համար պայքարում ՌԴ հավաքականի հնարավորությունները Բիշովեցը մի փոքր գերադասելի է համարում՝ հաշվի առնելով մնացած հանդիպումների խաղացանկը: Հունիսի 4-ին կայանալիք Ռուսաստան-Հայաստան հանդիպումից հետո մնացած 4 խաղերից երեքը (Մակեդոնիա, Իռլանդիա, Անդորրա) ռուսներն անցկացնելու են սեփական հարկի տակ՝ հյուրընկալվելով միայն Սլովակիայի ընտրանուն: Իսկ ՀՀ հավաքականին դժվարին մրցախաղեր են սպասում մրցակիցների դաշտում Սլովակիայի եւ Իռլանդիայի ֆուտբոլիստների հետ: Բացի այդ էլ, ներկայումս ՌԴ հավաքականը 2 միավորով գերազանցում է Հայաստանի ընտրանուն:

Սերգեյ Պողոսյանը նշեց, որ առաջիկա խաղում հայ ֆուտբոլիստների հաղթելու ցանկությունը շատ մեծ է: Հաջողությանը պետք է նպաստեն թե մեր ֆուտբոլիստների վարպետությունը, որը վերջին շրջանում աճել է, թե ֆուտբոլասերների բուռն աջակցությունը: Ըստ Պողոսյանի, մեր հավաքականը վերելք է ապրում, կոլեկտիվ խաղ է ցուցադրում, պայքարում է մինչեւ վերջ: Եվ թեեւ ՌԴ հավաքականում բարձրակարգ ֆուտբոլիստներ են խաղում, սակայն հնարավոր է նրանց հաղթել:

Կարեն Գիլոյանն էլ նկատեց, որ եթե ռուսները խաղան այնպես, ինչպես Իրանի հետ անցկացրած ընկերական խաղում, ապա մերոնք կհաղթեն: Նա հաջողություն մաղթեց երկու հավաքականներին, սակայն ցանկություն հայտնեց, որ մերոնք հաղթեն:

Հեռուստակամուրջի մասնակիցները միակարծիք էին այն հարցում, որ դիտարժան ու թեժ մրցակցություն է ծավալվելու: Ցանկությունն էլ մեկն էր՝ խաղադաշտում թող հաղթի ուժեղագույնը, իսկ խաղադաշտից դուրս՝ բարեկամությունը:

Արոնյանը շարունակեց հաղթարշավը

Մոնտե Կառլոյում ընթացող շախմատի «Ամբեր» մրցաշարում իր հաղթարշավն է շարունակում Լեւոն Արոնյանը: 7-րդ եւ 8-րդ տուրերում Արոնյանը միեւնույն 1,5-0,5 հաշվով հաղթեց Բորիս Գելֆանդին ու Վիշվանաթան Անանդին: Եթե Գելֆանդին Լեւոնը պարտության մատնեց «կույր» շախմատում, ապա աշխարհի չեմպիոնի նկատմամբ առավելության հասավ արագ շախմատի պարտիայում:

8 տուրից հետո Արոնյանը 11,5 միավորով գլխավորում է աղյուսակը: Այսօր կայանալիք 9-րդ տուրում Արոնյանի մրցակիցը կլինի Վլադիմիր Կրամնիկը, որն անսպասելիորեն անհաջող է ելույթ ունենում՝ 5,5 միավորով Անիշ Գիրիի հետ եզրափակելով աղյուսակը:

Արոնյանին շարունակում է կրնկակոխ հետեւել Մագնուս Կառլսենը: 7-րդ տուրում նա 2 պարտիաներում էլ հաղթեց Կրամնիկին, իսկ հաջորդ մրցախաղում 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Վեսելին Թոփալովին: Կառլսենն ընդամենը կես միավոր է զիջում Արոնյանին:

Մնացած մասնակիցները զգալիորեն հետ են մնացել առաջատարներից, ուստի կարելի է ենթադրել, որ գլխավոր մրցանակի համար պայքարը կընթանա Արոնյանի եւ Կառլսենի միջեւ: 3-4-րդ տեղերը 8,5-ական միավորով բաժանում են Անանդն ու Իվանչուկը: Անանդը 7-րդ տուրում երկու պարտիաներում էլ հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի հետ: Իվանչուկը միեւնույն 1,5-0,5 հաշվով առավելության հասավ Ալեխանդր Գրիշչուկի եւ Բորիս Գելֆանդի նկատմամբ:

«Կույր» շախմատի մրցաշարում առայժմ լավագույնն Արոնյանի արդյունքն է՝ 6 միավոր: Անանդը, Կառլսենն ու Գրիշչուկը հայ շախմատիստին զիջում են 1,5 միավորով: Արագ շախմատում 6,5 միավորով առաջատարը Կառլսենն է, որին մեկ միավոր է զիջում Արոնյանը:

Տիգրան Պետրոսյանը գերազանց է մեկնարկել

Տաշքենդում անցկացվող ուզբեկ գրոսմայստեր Ագզամովի հուշամրցաշարում գերազանց է մեկնարկել Տիգրան Պետրոսյանը: Մեկնարկում հաղթելով Մամաթկուլ Խայլաեւին, Ակմալ Ֆայզուլաեւին եւ Վլադիմիր Եգինին, Պետրոսյանը 3 միավորով ռուսաստանցի Եվգենի Ալեխեեւի հետ գլխավորում է աղյուսակը: 4-րդ տուրում առաջատարները կմրցեն միմյանց հետ:

Շվեյցարական մրցակարգով, 9 տուրով անցկացվող մրցաշարին մասնակցում են 106 շախմատիստներ: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 20 հազար դոլար է, որից 5 հազարը կստանա հաղթողը: Ընդհանուր առմամբ դրամական մրցանակներ կստանան 12 լավագույնները:

Կլիչկոն պահպանեց տիտղոսը

Ուկրաինացի գերծանրաշային բռնցքամարտիկ Վիտալի Կլիչկոն 6-րդ անգամ հաջողությամբ պաշտպանեց WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Քյոլնում կայացած մենամարտի հենց առաջին ռաունդում նա նոկաուտի ենթարկեց կուբացի Օդլանիեր Սոլիսին: Վերջինս անհաջող ընկավ՝ վնասելով ոտքը: Վեր կենալով, նա չկարողացավ շարունակել մենամարտը եւ հաղթանակը շնորհվեց Կլիչկոյին:

Մենամարտից անմիջապես հետո Սոլիսին տեղափոխեցին հիվանդանոց, որտեղից նա դուրս եկավ հենակներով: Բժիշկների գնահատմամբ վիրահատության անհրաժեշտություն կա: Այս առնչությամբ Օլիսի պրոմոութեր Ահմեդ Օները հետեւյալն նշել. «Կարծում եմ, որ առանց վիրահատության հնարավոր չէ, ուստի Սոլիսին հարկ կլինի բավական ժամանակ ընդմիջել ելույթները: Եթե Վիտալին իսկական տղամարդ է, ապա եւս մեկ անգամ ռինգ դուրս կգա Սոլիսի դեմ: Չեմ կարծում, թե Վիտալին հրաժարվեցնի Սոլիսին: Կարծում եմ, որ ամենայն դեպքում նրանց միջեւ նոր հանդիպում կլինի: Ինձ համար հիանալի է զգում, թեեւ շուտով 40 տարեկան կդառնամ: Այնպիսի զգացում ունեմ, որ աշխարհում ոչ մեկն ինձ չի կարող հաղթել: Դեւիդ Հեյի բախտը բերել է, որ մենամարտելու է կրտսեր եղբորս՝ Վլադիմիրի հետ, քանի որ իմ հետ մրցելու դեպքում հանդիպումն արագ կավարտվեր՝ ցավ պատճառելով բրիտանացուն: Վլադիմիրի հետ մենամարտը կտեւի 12 ռաունդ եւ վերջում եղբայրս նոկաուտի կենթարկի Հեյին», նշել է Վիտալի Կլիչկոն:

«Փյունիկի» խաղը մտահոգվելու տեղիք է տալիս

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 2-րդ տուրում առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում «Փյունիկ»-«Գանձասար» հանդիպումը, քանի որ երկրի չեմպիոնի կազմում մեծ թիվ են կազմում ՀՀ հավաքականի թեկնածուները: Ցավոք, վերջիններս առայժմ աչքի չեն ընկնում իրենց գրագետ ու արդյունավետ գործողություններով, ինչը մտահոգվելու տեղիք է տալիս: «Գանձասարի» հետ խաղում փյունիկցիներին չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Խաղասկզբում վնասվածքի պատճառով խաղադաշտը թողեց Էդգար Մանուչարյանը, ինչն ավելի թուլացրեց չեմպիոնի հարձակման գիծը: Եվ եթե վարպետությամբ չփայլեր բրազիլացի Մարկոսը, որը 39-րդ րոպեին տուգանային հրաշալի հարվածով բացեց հաշիվը, ապա «Փյունիկն» այդ խաղում դժվար թե գտներ մրցակցի դարպասի բանալին:

«Գանձասարը» 2-րդ խաղակեսում կարողացավ վերականգնել հավասարակշռությունը: 79-րդ րոպեին գեղեցիկ եռաքայլ կոմբինացիան դիպուկ հարվածով եզրափակեց Արթուր Քոչարյանը: Կաղանցիները կարող էին նույնիսկ հաղթել, եթե առաջին խաղակեսում Ֆլորին Անգելը, ընդմիջումից հետո էլ Արսեն Ավետիսյանը մոտ տարածությունից նպատակավոր դիրքից չվրիպեին:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Վարդան Մինասյան («Փյունիկ»)-**Հաշիվը լրիվ համապատասխանում է խաղին: Իրոք, նման խաղով հնարավոր չէր հաղթել «Գանձասարին», քանի որ նախորդ տարվա համեմատ կազմանցիների մոտ դրական փոփոխություններ տեսա: Ինձ ավելի շատ անհանգստացնում է մեր խաղը, այլ ոչ թե հաշիվը: Սպասում էի, որ մեր ֆուտբոլիստների համար ծանր է լինելու, քանի որ հավաքականի խաղին ընդառաջ ինտենսիվ մարզվել էին: Փոփոխություններ կատարելիս երբեք հաշվով չեմ առաջնորդվել: Պարզապես Գեւորգ Ղազարյանն ու Էդգար Մալաքյանը վատ վիճակում էին, նրանց գործողություններում խոտանը շատ էր: Ինչ վերաբերում է Բետեին հավաքական վերադարձնելու հարցին, ապա ՀՖՖ նախագահը պետք է հանդիպի կամերունցի դարպասապահի հետ:**

Աբրահամ Խաչմանյան («Գանձասար»)-**Կազմի հետ կապված խնդիրներ էին ծագել: Պաշտպաններ Կարեն Զաքարյանն ու Դավիթ Խանիշվիլին վնասվածքի պատճառով բավական ժամանակ բացակայում էին, Նոա Կասուլեն էլ գավաթի խաղում մկանը ձգեց: Ճանապարհին էլ Արա Խաչատրյանի կույրաղիքի նոպան սկսվեց, տեղափոխեցինք հիվանդանոց՝ վիրահատության: Ցավոք, նույն խնդիրներն ենք ունենալու նաեւ մարտի 24-ին «Ուլիսի» հետ կայանալիք խաղում: Իմ կարծիքով, հավասար պայքար ընթացավ, թեեւ կարող էինք նաեւ հաղթել, եթե Ֆլորինն ու Ավետիսյանը իրացնեին գոլային պահերը: Լավ էր, որ կարողացանք հավասարեցնել հաշիվը: Շնորհակալ եմ տղաներից, որ վերադասավորվեցին ու մինչեւ**

վերջ պայքարեցին: Կարծում եմ, որ ասիձանաբար «Գանձասարն» ավելի լավ ֆուտբոլ կցուցադրի: Շնորհակալ եմ նաեւ թիմի երկրպագուներից աջակցության համար: Նրանց թիվն ավելի կաճի, եթե թիմը լավ խաղ ցուցադրի:

Հետաքրքրական մրցավեճում անցավ «Բանանց»-«Ուլիս» հանդիպումը: Առաջին խաղակեսի վերջին «Բանանցի» նորեկ Բրունո Կորեան բացեց հաշիվը: Ընդմիջումից հետո «Ուլիսը» տիրեց նախաձեռնությանը եւ 3 գոլ խփելով՝ հաղթեց: Աչքի ընկան Արսյոմ Ադամյանը, Նորայր Սահակյանն ու Գեորգի Կրասովսկին:

Առաջնության խոշոր հաշվով անդրանիկ հաղթանակն իր օգտին գրանցեց «Միկան»՝ «Հրազդանում» 3 անպատասխան գնդակ ուղարկելով «Արարատի» դարպասը: Արարատցիները խաղասկզբում շատ անփույթ խաղացին պաշտպանությունում, որի արդյունքում 2 գոլ բաց թողեցին: Նախ Էդնեյն իրացրեց 11 մ հարվածը, ապա հսկողությունից դուրս մնացած Նարեկ Բեգլարյանը 2-րդ գոլը խփեց: Ավելացված ժամանակում էլ գոլի հեղինակ դարձավ «Միկայում» նորամուտը նշած չինացի ֆուտբոլիստ Դոնգ Ֆանգժուն:

Հաջող է մեկնարկել «Շիրակը»՝ Իջեւանում 2-1 հաշվով հաղթելով «Իմպուլսին»: Հաշիվը բացեց Շիրակցի Գեւորգ Հովհաննիսյանը, որին «Իմպուլսը» պատասխանեց Գագա Թբիլաշվիլու գոլով: Խաղի ելքը վճռվեց 85-րդ րոպեին, երբ Շիրակցի Անդրանիկ Բարիկյանը հստակ իրացրեց 11 մ հարվածը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Միկա	2	1	1	0	3-0	4
2. Փյունիկ	2	1	1	0	2-1	4
3. Շիրակ	2	1	1	0	2-1	4
4. Ուլիս	1	1	0	0	3-1	3
5. Գանձասար	1	0	1	0	1-1	1
6. Բանանց	2	0	1	1	2-4	1
7. Արարատ	2	0	1	1	1-4	1
8. Իմպուլս	2	0	0	2	1-3	0

Մարտիրոսյանը հաղթեց նոկաուտով

24-ամյա Վանես Մարտիրոսյանը պրոֆեսիոնալ ռինգում իր հերթական՝ 29-րդ հաղթանակը տոնեց: Մոնրեալում կայացած մենամարտում նա արդեն 2-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց մեքսիկացի Բլադիմիր Էռնանդեսին: Հիշեցնենք, որ Վանեսը դեռեւս չի պարտվել:

Հերթական մենամարտը Մարտիրոսյանը կանցկացնի ապրիլի 23-ին ԱՄՆ-ում, փորձառու Սաուլ Ռոմանի հետ, որտեղ կվիճարկվի առաջին միջինքաշային կարգում WBC Silver-ի թափուր մնացած տիտղոսը: Այդ մենամարտում հաղթողը նաեւ իրավունք կստանա հետագայում վիճարկելու WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հայտնում

ԿԱՐԳ

«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող «Երիտասարդությունը եւ Հայաստանի ապագան» թեմայով լավագույն գրական ստեղծագործության VII միջազգային մրցույթի

(Մրցույթը նվիրվում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին)

1. Ընդհանուր դրույթներ

Ներկա դրույթները որոշում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող VII միջազգային մրցույթի նպատակն ու խնդիրները, ինչպես նաեւ նրա անցկացման կարգը:

Մրցույթի թեման է «**Երիտասարդությունը եւ Հայաստանի ապագան»**:

Մրցույթն անց է կացվում «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության, «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միության կողմից՝ ՀՀ Սփյուռքի նախարարության, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ:

Մրցույթն անցկացվում է 2011 թվականի **ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 15-ը**:

Մրցույթի արդյունքները կհրապարակվեն 2011 թ. սեպտեմբերին, իսկ հաղթողների պարգեւատրման պաշտոնական արարողությունը կկայանա հոկտեմբերին՝ «Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի օրերը Հայաստանում եւ Արցախում»-2011 ծրագրի շրջանակներում:

2. Մրցույթի նպատակն ու խնդիրները

Մրցույթի նպատակն է նպաստել ներկա իրավիճակում հայ ժողովրդի համար բացառիկ գերակայություն ունեցող հիմնահարցի՝ հայոց պետականության պահպանման, անկախ Հայաստանի ամրապնդման եւ հզորացման գործում հայ երիտասարդության ջանքերի միավորման, նրանց ակտիվության բարձրացման գործընթացի արագացմանը:

Մրցույթն իր բնույթով նպատակ է հետապնդում նաեւ արդի հայ երիտասարդ սերնդի մեջ սերմանելու հայրենասիրական ոգի, հայրենիքին ծառայելու պատրաստակամություն, հպարտության զգացում Հայաստան երկրի հանդեպ:

Մրցույթի մասնակիցը ներկայացված աշխատանքում պետք է փորձի ցույց տալ երիտասարդության տեղն ու դերը Հայաստանի զարգացման, հզորացման, հայոց պետականության ամրապնդման գործում: Աշխատանքում պետք է հստակորեն երեւա մրցույթի մասնակցի վերաբերմունքը մեր քսանամյա երիտասարդ հանրապետության ապագայի նկատմամբ, թե ինչպիսին է նա տեսնում Հայաստանի վաղվա օրը եւ իր տեղը Հայաստան երկրի ապագայի կերտման գործընթացում:

Ներկայացված աշխատանքում պետք է շեշտադրվի այն միտքը, որ առանց միասնության, առանց ջանքերի միավորման չենք կարող արդյունավետ լուծել Հայաստանի խնդիրները, դիմակայել նոր հարյուրամյակի կողմից մեր գոյությանը նետված մարտահրավերներին:

3. Մրցույթի պայմաններն ու մասնակիցները

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներն ու դպրոցների բարձր դասարանցիները, ինչպես նաեւ այլազգի երիտասարդ ներկայացուցիչներ:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ, որը կարող է լինել շարադրություն, բանաստեղծություն, պատմվածք, հրապարակախոսական ակնարկ եւ այլն:

Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում թեմային եւ նշված ծավալին համապատասխանող աշխատանքները:

4. Մրցույթի կազմակերպման կարգը

Մրցույթը ղեկավարելու նպատակով ձեւավորվել է Կազմկոմիտե, որը որոշում է մրցույթի անցկացման ժամկետները, կարգը, ձեւավորում մրցութային հանձնաժողով, հաստատում նրա կազմը եւ ամփոփում արդյունքները:

Մրցութային հանձնաժողովը

▼ մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները,

▼ սահմանում է մրցանակային տեղերը եւ անվանակարգերը,

▼ ստուգում եւ գնահատում է աշխատանքները,

▼ որոշում է հաղթողներին եւ ներկայացնում Կազմկոմիտեի հաստատմանը:

Ուղարկված աշխատանքները չեն վերադարձվում:

Մրցույթի Կազմկոմիտեն իրեն իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում:

Մրցույթի արդյունքները ուսանողների եւ աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին:

5. Հաղթողների պարգեւատրումը

Մրցույթում առաջին երեք տեղերը շահած ուսանողները, ինչպես նաեւ աշակերտները կպարգեւատրվեն արժեքավոր նվերներով եւ դիպլոմներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ նվերներով եւ պատվոգրերով: Լավագույն աշխատանքները կհրատարակվեն առանձին ժողովածուով:

6. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները

Մրցութային աշխատանքները պետք է ներկայացնել մինչեւ 2011 թվականի հունիսի 15-ը: Հայաստանից եւ Արցախից ներկայացված աշխատանքներն ընդունվում են միայն հայերեն լեզվով, իսկ մերձավոր եւ հեռավոր արտերկրերից ներկայացվող աշխատանքները կարող են լինել հայերեն, ինչպես նաեւ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

Ներկայացված աշխատանքների ծավալը չպետք է գերազանցի համակարգչային 4 էջի սահմանը:

Աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով (Word ֆորմատով, վերին եւ ստորին լուսանցքները՝ 2, աջ եւ ձախ լուսանցքները՝ 2.5, կարմիր տողը՝ 1.25, տպատառի չափը՝ 14 pt, ինտերվալը՝ 1): Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ անձամբ կամ ուղարկվել փոստով:

Տիտղոսաթերթի վրա պարտադիր է նշել՝

- Ազգանուն
- Անուն
- Հայրանուն
- Ծննդյան թիվը
- Հասցեն
- Հեռախոսը
- Էլեկտրոնային փոստի հասցեն
- Ուսումնական հաստատության անվանումը, վայրը, հասցեն եւ հեռախոսի համարը

Աշխատանքները կարող են ներկայացվել Մրցույթի կազմակերպչի հասցեով՝

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղ

ք.Երեւան, Տերյան 69:
Հեռ. (37410) 51 04 42
(37410) 51 04 43
Ֆաքս (37410) 51 04 41
Էլ. փոստ՝ **vladis@netsys.am**

կամ

ՀՀ Կրթության եւ գիտության նախարարություն

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Գլխավոր պողոտա, Կառավարության III շենք, 611 սենյակ
Էլ. փոստ՝ **kgnhanrakrtutun@mail.ru**

Մրցույթի կազմկոմիտե

«Ակսոն» աղրանֆա-հումֆային բորսայի հարթակում Ս.Թ. մարտի 25-ին այսուհետ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 11:00 -17:00, իրականացվելու է «ՀԿԵ» ՓԲԸ-ին պատկանող, 72 հաս մարդատար վագոնների աճուրդային վաճառքը դասական եղանակով, 1500000 ՀՀ դրամ մեկնարկային գնից: Լրացուցիչ տեղեկություններիի համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:

Հայաստանի Դեմոկրատական կուսակցության 2010թ. ֆինանսական հաշվետվությունը

Նախորդ տարվանից առաջացած մնացորդը	-	2318դր.
Անդամավճարներից մուտքերը	-	1172 300դր.
Ծախսերը		
Աշխատավարձ	-	349200
Սոց. վճարներ	-	121300
Էլ. էներգիա	-	41910
Գազ	-	8900
Հեռախոս	-	51000
Վարձավճար	-	600000
Այլ ծախսեր	-	1200

Ընդամենը	-	1173510դր.
Մնացորդը 31.12.2010թ. դրությամբ՝	-	1108դր.

Հայաստանի Դեմոկրատական Կուսակցության նախագահ Ա.Սարգսյան

ACBA-CREDIT AGRICOLE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի ապրիլի 14-ին ժամը 12:00-ին «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Դավթաշեն» մասնաճյուղում (հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն I թաղամաս 42/2) տեղի է ունենալու «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի մարտի 14-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՊԸՊԶԲ -11/1

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (ՀՀ ԿԱԱԳԿՊԿ), որը գտնվում է ք. Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել **«Անվտանգության համակարգի սարքերի ձեռքբերման»** գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԿԱԱԳԿՊԿ կարիքների համար անվտանգության համակարգի սարքերի ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2011թ. դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ՝ ք. Երեւան, Արշակունյաց 7, 314 սենյակ հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն, դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի մարտի 14-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ - ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԾՁԲ-11/1

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Համակարգչային տեխնիկայի սպասարկման ծառայությունների» գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի սպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2011թ. դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Բաց ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, Արշակունյաց 7, 314 սենյակ հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 40-րդ օրվա ժամը 12.00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Բաց ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: